2021, ՕԳՈՍՏՈՍ Ա, ԹԻՎ 15 (587)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

21 օգոստոսի

ՏՈՆ ԾՆՆԴՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ



ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ,

Մենք՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու զավակներս, ի խորոց սրտի շնորհավորում ենք Ձեզ՝ ծննդյան օրվա կապակցությամբ, ցանկանում քաջ առողջություն եւ երկար ու ճիգ տարիների կյանք: Աղոթում ենք, որ ամենազութ Տերը պարգեւի Ձեզ հոգու անբավ խաղաղություն, ծով համբերություն, աննկուն կամք եւ երկարատեւ զահակալության անսովոր ու լուսաշող ընթացք: Թող Աստված Ձեր բոլոր երազանքներն ու նպատակները պսակի հաղթանակի բերկրանքով՝ ի փառս ու շենություն մեր Սուրբ Եկեղեցու եւ հայրենիքի:

Որդիական սիրով, խոնարհումով ու ակնածանքով՝

«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն, հեղինակներ եւ ընթերցողներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը ՀՀ Ազգային Ժողովի 8-րդ գումարման անդրանիկ նիստին

(2 օգոստոսի, 2021 թ.)



Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Հարգելի՛ նախագահող,

Հարգելի՛ պատգամավորներ եւ ներկաներ,

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ՝ Ազգային ժողովի 8-րդ գումարման անդրանիկ նիստի առիթով եւ շնորհավորում նորընտիր պատգամավորներիդ:

Այսօր մեր հայրենիք Հայաստանն ու Արցախը դիմակայում են արտաքին եւ ներքին լուրջ մարտահրավերների՝ հանդիման Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի ու ծավալապաշտական նկրտումների: Հայրենական կյանքում ծառացած հիմնախնդիրները հաղթահարելու համար հրամայական են պետական, քաղաքական գործիչների եւ ողջ հասարակության համախմբումը, քաղաքացիական պատասխանատվության բարձր գիտակցությունը, համընդհանուր զգաստությունն ու բարեխղճությունը: Բոլորիս փափագն ու ձգտումն են մեր հայրենիքի անվտանգությունն ու առաջընթացը, խաղաղ եւ բարեկեցիկ կյանքի կերտումը, որը մեծապես պայմանավորված է նաեւ օրենսդիր մարմնի եւ ձեւավորվելիք կառավարության գործունեությամբ:

Այսօր դուք ստանձնում եք ձեր պարտականությունները՝ օրենսդրական նախաձեռնություններով կարեւոր ներդրում բերելու տնտեսության շարունակական զարգացման, գիտության, կրթության, մշակույթի առաջընթացի գործում, պաշտպանելու անխախտությունը մեր ինքնության ու արժեքների եւ հաստատուն պահելու արդարությունն ու իրավունքը: «Երանի նրանց, ովքեր իրավունքն են պահում եւ ամեն ժամ արդարություն գործում»,– ասում է Սուրբ Գիրքը (Սաղմ. 105.3)՝ վկայելով, որ արդարությունն ու օրինապահությունն են գրավականը երկրի եւ ժողովրդի բարօրության ու հարընթաց բարգավաճման: Օրենսդրական ձեր գործունեությունը՝ արդարության եւ իրավունքի գերակայությամբ, միտված պետք է լինի ձեւավորելու անհրաժեշտ միջավայր ու հնարավորություններ մեր պետության հզորության եւ ապահովության, մեր երկրի արժանապատիվ կյանքի համար: Այս նվիրական դարավոր իղձն իրականություն դարձնելու ուղին մեր հայրերի պատգամի իրագործումն է, որոնք ըստ Ավետարանի ուսուցանել են, որ օրենքն է մարդու համար, եւ ոչ թե մարդը՝ օրենքի (հմմտ. Մարկ. 2.27):

Մեր երկրում տիրող ներկայիս ծանր իրավիճակում եւ տարածաշրջանում առկա բարդ ու դժվարին հանգամանքներում մենք կենսականորեն պետք ունենք միասնության, հանդարտության, հուզումների ու լարվածության թոթափման՝ ատելության, վրեժխնդրության ու պառակտումների փոխարեն: Մենք՝ ամենքս, պետք է քաջ գիտակցենք, որ ազգային եւ հասարակական համերաշխությանն այլընտրանք չկա: Առաջնահերթորեն եւ ա՛յս խորհրդարանից, կառավարական համակարգից պիտի սերմանվեն սերը, փոխհասկացողությունը, բարի կամեցողությունը հասարակությունում: Խորհրդարանական գործունեության ընթացքում հնչող քննադատությունները թող լինեն միայն կառուցելու եւ սխալները շտկելու նպատակով, ծավալվող բանավեճերը՝ ճշմարտություն գտնելու, ճշմարտության հոգով առաջնորդվելու եւ այդ ճշմարտության վրա խարսխելու օրինահարգ հանրային կյանքը եւ պետության կենսագործունեությունը:

Հայրապետական Մեր հորդորն ենք բերում ձեզ, որ քաղաքական հայացքների եւ տեսակետների բազմակարծությամբ հանդերձ՝ մեր հայրենիքի եւ ժողովրդի լուսավոր ապագայի կերտման նույն ձգտումով աշխատեք համախումբ՝ մեր պետության անսասանության, ներքին ու արտաքին մարտահրավերների հաղթահարման, արտագաղթի կանխման, Սփյուռքի հետ կապերի ու գործակցության առավել արդյունավորման ջանքերով: Ամուր պահեք հավատարմությունը մեր հոգեւոր եւ ազգային արժեքներին, հայրենիքի գերագույն շահերին, մեր սուրբ նախնյաց եւ հայրենյայց պաշտպան նահատակ զավակների հավատին ու նվիրական տեսիլքին, որպեսզի ազգովի ունենանք շնորհն ու զորությունը կերտելու մեր պետության եւ հայրենական կյանքի զարթոնքը:

Մեր Սուրբ Եկեղեցին բոլոր ժամանակներում առաջնորդել է մեր ժողովրդին հոգու փրկության, մտքի լուսավորության, ազգային կյանքի վերելքի, նաեւ օրհնել ազատագրական պայքարները, սատարել պետականության վերահաստատման մաքառումներին: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այս տեսլականով միշտ իր ձայնն է բարձրացնում հայրենիքի համար վտանգավոր ընթացքների, ազգային ինքնության սպառնալիքների, մեր ժողովրդի իրավունքների ու արժեքների ոտնահարման դեմ: Հավատարիմ իր կոչմանը՝ մեր Սուրբ Եկեղեցին պիտի շարունակի տերունապատվեր իր առաքելությունը՝ զորակից ու օգտակար լինելով հայրենաշեն ու ազգաշահ բոլոր ջանքերին՝ ի սեր մեր ժողովրդի եւ պետության:

Աղոթում ենք, որ Աստված իմաստություն պարգեւի եւ աջակից լինի ձեզ՝ ձեր գործունեության մեջ, որպեսզի Ազգային ժողովի առաքելությունն արգասավորվի ցանկալի արդյունքներով՝ հանուն հայրենիքի առաջընթացի, մեր ժողովրդի խաղաղ, ապահով ու արժանապատիվ կյանքի: Բարի եւ օրհնյալ ընթացք Ազգային ժողովի 8-րդ գումարման աշխատանքներին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետը հյուրընկալեց «Հայկյան» մրցանակաբաշխության հաղթողներին

Օգոստոսի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում հյուրընկալեց «Armenia First» նախաձեռնության եւ «Help Foundation» հիմնադրամի կողմից համատեղ կազմակերպված «Հայկյան» մրցանակաբաշխության հաղթող հայորդիներին, որոնք 44-օրյա Արցախյան պատերազմի ընթացում եւ դրանից հետո իրենց աջակցությունն են բերել Արցախին ու Հայաստանին:

Հանդիպմանը «Help» հիմնադրամի համահիմնադիր Լուսինե Փիրոյանը սրբազան հորը ներկայացրեց հյուրերին, ինչպես նաեւ տեղեկություններ փոխանցեց Հայաստանում եւ Արցախում իրականացվելիք նոր նախաձեռնությունների ու ծրագրերի վերաբերյալ:

Արշակ սրբազանը, ողջունելով հայորդիների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, նրանց փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունն ու բարեմաղթանքները: Դիվանապետ սրբազան հայրն իր երախտագիտությունը հայտնեց հիմնադրամների ներկայացուցիչներին եւ «Հայկյան» մրցանակակիրներին՝ տարբեր ժամանակաշրջաններում, հատկապես 44-օրյա Արցախյան վերջին պատերազմի ընթացքում, Հայաստանին եւ Արցախին տարբեր ոլորտներում աջակցություն ցուցաբերելու համար:

Մայր Աթոռի դիվանապետը չափազանց կարեւոր համարեց հոգեւոր միասնական արժեքների՝ մասնավորաբար Հայ Եկեղեցու շուրջ հայության համախմբվածության անհրաժեշտությունը, որն առանցքային գործոնն է ազգի եւ հայրենիքի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման:

Ըստ սրբազան հոր՝ հայ հասարակության եւ Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներն ու փորձությունները հաղթահարելով է հնարավորություն ստեղծվում ձգտելու եւ հասնելու հաղթանակների:

Իրենց հերթին հիմնադրամների ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին Հայ Եկեղեցու՝ հայկական մշակութային եւ հոգեւոր ժառանգության պահպանության գործում ներդրած ջանքերի ու կատարվող աշխատանքների համար:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Մեսրոպ վրդ. Պարսամյանը, ազատվելով Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսչի պաշտոնից, ծառայության է կոչվել ԱՄՆ արեւելյան հայոց թեմում՝ թեմական առաջնորդի իշխանության ներքո:

Շահե ծ. վրդ. Անանյանը նշանակվել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ:

Կարգալույծ են հռչակվել Պետրոս աբեղա Ազարյանը եւ Գեղարդ աբեղա Հովհաննիսյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ են հռչակվել Պետրոս աբեղա Ազարյանը եւ Գեղարդ աբեղա Հովհաննիսյանը: Տնօրինության համար հիմք է ծառայել Պետրոս աբեղայի՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին խնդրագիրը:

Կարգալույծ եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքին՝ Նորայր Ազարյան ավազանի անունով:

Իսկ Գեղարդ աբեղա Հովհաննիսյանի կարգալուծության համար հիմք են ծառայել Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի զեկուցագիրը եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կարգապահական հանձնախմբի եզրակացությունը՝ Գեղարդ աբեղա Հովհաննիսյանի՝ ծառայության վայրն ինքնակամ լքելու եւ կարգազանց ընթացքի վերաբերյալ:

Կարգալույծ եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքին՝ Գագիկ Հովհաննիսյան ավազանի անունով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գեւորգյան հոգեւոր ճեմարան (աստվածաբանական համալսարան) 2021—2022 ուս. տարվա ասպիրանտուրայի ընդունելություն

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանը (աստվածաբանական համալսարան) հայտարարում է 2021–2022 ուս. տարվա ասպիրանտուրայի ընդունելություն՝ «Աստվածաբանություն» մասնագիտությամբ (թվանիշը՝ ԻԵ.00.01):

ԳՀՃ-ի ասպիրանտուրա կարող են ընդունվել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցողները:

Ասպիրանտուրա ընդունվելու համար անձի դիմումը լրացվում է ԳՀՃ-ի քարտուղարությունում՝ կցելով հետեւյալ փաստաթղթերը.

1. ինքնակենսագրություն, անձնագրի պատճենը եւ 3 լուսանկար (3x4 չափսի),
2. մկրտության վկայականը,
3. բակալավրի եւ մագիստրոսի դիպլոմների ու դրանց միջուկների պատճենները,
4. օտար լեզու, նաեւ ինֆորմատիկա եւ տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը.
1) անգլերեն – «TOEFL» (iBT)՝ 46 եւ «IELTS»՝ 5.5 միավոր,
2) ֆրանսերեն – «TCF»՝ 200 միավոր,
3) գերմաներեն – «on DaF»՝ 60 միավոր,
4) ինֆորմատիկա եւ տեղեկատվահաղորդակցական հիմունքներ՝ 25 միավոր:
5. Աստվածաբանական գիտությունների շրջանակներում գրավոր գիտական աշխատանք (հրատարակված կամ անտիպ, pdf կամ word ձեւաչափով):

Ասպիրանտուրայի դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2021 թ. օգոստոսի 16-ից սեպտեմբերի 18-ը՝ երկուշաբթիից շաբաթ, ժամը 10:00–16:00-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ասպիրանտուրայի բաժին.

հեռախոս՝ (+374 77) 402026

էլ. հասցե՝ gevorgianseminary@gmail.com

Մայր Աթոռում նշվեց Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը

Օգոստոսի 15-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը: Այս բերկրառատ օրվա առիթով, Սուրբ Գայանե վանքում, Մայր Աթոռի միաբանությունը մասնակցեց Պատարագի սրբազան արարողությանը: Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Հայաստանի աստվածաշնչային

ընկերության գլխավոր քարտուղար Եզնիկ արք. Պետրոսյանը:

Սրբազան հայրը, իր քարոզում անդրադառնալով տոնի խորհրդին, մասնավորապես նշեց. *«Երկու հազար տարի առաջ Աստվածամայրը մեզ չլքեց եւ չգնաց, այլ ապրում է մեր մեջ, ապրում է բոլոր մայրերի մեջ, եւ մենք անցյալով չենք խոսում Աստվածամոր մասին, որովհետեւ նա այսօր մեզ հետ է»*:



Այնուհետեւ սրբազան հայրը, անդրադառնալով առաջին դարում տեղի ունեցած իրադարձություններին, խոսեց Սուրբ Աստվածածնի կերպարի եւ փրկագործության պատմության մեջ նրա ունեցած դերակատարության մասին, ինչպես նաեւ Վերափոխման տոնի խորհրդին՝ պատգամելով ներկաներին ապրել Վերափոխման խորհրդի իրականության մեջ՝ խնդրելով Սուրբ Կույսի բարեխոսությունը:

Եզնիկ սրբազանը հատուկ անդրադարձ կատարեց որդեկորույս մայրերին՝ վերջիններիս կրած ծանրագույն ցավերն ու վշտերը համեմատելով Աստվածամոր տառապանքների հետ. *«Աստվածամոր նման բազմաթիվ մայրեր կան այսօր Հայաստանում, ովքեր զավակներ կորցրեցին, ովքեր ունեն այն նույն մայրական ցավը, ինչ Աստվածամայրն ուներ, եւ որոնց համար Աստվածամայրն իբրեւ օրինակ կարող է լինել՝ դիմագրավելու այն ցավերին, որոնք այսօր ունեն իրենց հոգում եւ իրենց սրտում:*

Այս մտածումներով մաղթենք, որ ամոքվեն վերքերը՝ հոգեւոր վերքերը մեր բոլոր մայրերի, որոնք որդեկորույս են այսօր, ամոքվեն վերքերն այն բոլոր կանանց, որոնք իրենց ամուսիններին կորցրեցին, եւ ամոքվեն վերքերն այն բոլոր երեխաների, որոնք իրենց հայրերին կորցրեցին: Թող Աստվածամայրը ձեր որդիների հետ լինի այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. Ամեն»:

Վերջում պատարագիչ սրբազանը, աղոթք վերառաքելով առ Աստված, եւս մեկ անգամ հաստատեց, որ Աստվածամայրը կենդանի է, նա մեզ հետ է: Քրիստոս այս պահին գալիս է Աստվածամորը փոխադրելու: Վաղը նույնպես Աստվածամայրը մեզ հետ է լինելու՝ բոլորիս սրտերում:

Հավարտ սուրբ Պատարագի, հանդիսապետությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանի, Սուրբ Տրդատի բաց խորանին կատարվեց Խաղողօրհնեքի արարողությունը:

Վերջում օրհնված խաղողի ողկույզները բաժանվեցին հավատավոր ժողովրդին:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Դրվագներ Վան-Վասպուրականում Արմենական, Հնչակյան եւ Դաշնակցական կուսակցությունների գործունեությունից

19-րդ դարի 90-ական թվականներին էրգրում գործող քաղաքական ուժերի գործունեությանը բնորոշ երեւույթ էր զինատար խմբերի կազմակերպումը եւ դրսից զենքի ու զինամթերքի պաշարների փոխադրությունը: Զենք երկրի ներսում դժվար էր ճարվում, քանի որ «...հոն ներքի շուկայ չէր ստեղծուած, եւ յոյս ալ չկայ, որ ստեղծուի» (*Ռուբէն, հայ յեղափոխականի մը յիշատակները, Թեհրան, 1982, էջ 24*):

Իսկ առանց զենքի՝ անկարելի էին դառնում հայոց կուսակցությունների գոյությունն իսկ եւ ազգապաշտպան ծրագրերի իրականացումը: Այդ էր պատճառը, որ եւ արմենականները, եւ հնչակյաններն ու դաշնակցականները հետամուտ եղան զենքի փոխադրության գործը կազմակերպելուն:

Դաշնակցականները զենքերը փոխադրում էին ոչ միայն Պարսկաստանից, նաեւ Ռուսաստանից, որոնք «այնքան սուղի կը նստին իրենց փոխադրական ծխքերով», ուստի եւ աննպատակահարմար (*նույն տեղում*): Հետզհետե Սալմաստում եւ Թավրիզում բացվում են զինագործական արհեստանոցներ՝ «...շինելու համար զէնքերու փայտէ կոթերը եւ երկաթային այն մասերը, որ հնարաւոր է» (*նույն տեղում, էջ 25*): Զենքի փոխադրության գործը ճանապարհների ծայրաստիճան վտանգավոր, անապահով ու դժվարանցանելի լինելու պատճառով մեծ բարդությունների հետ էր կապված: Գործում էին զինատար մի քանի երթուղիներ: Պարսկաստանից զենքի փոխադրումը Սալմաստ – Վան ճանապարհով շուրջ 160 կիլոմետր է, իսկ Խոյ – Թադեւոս առաքյալի վանք – Վան՝ 200 կմ: ➥ *էջ 3, 5*

Վաթսունականների արձակագիրներ.

Ժամանակը եւ հերոսը

Սկիզբը՝ թիվ 12–14

Մեր ապրած ժամանակի եւ իրականության պատկերի հայտնաբերման, կյանքի ճշմարտության բացահայտման հարցն առնչվում է մարդու հոգեկան կերտվածքի, նրա ապրած վիճակների, հարաբերությունների, ձգտումների ու որոնումների, կյանքը գնահատելու եւ իմաստավորելու սկզբունքների, խոհերի ու հույզերի, արտաքին պահվածքի ու ներքին մենախոսությունների բարդ ու բազմաշերտ համակցությանը: Այս հարցերի արծարծման, գեղարվեստական մեկնաբանման ընթացքում առաջնահերթ նշանակություն ունեն ասելիքի ճշմարտացիությունը, ժամանակի մարդուն իր կյանքի որոշակի պայմաններում պատկերելու հմտությունը, նրա նկարագրի բնականության, անգամ նախակերպարային հավաստիության պահպանումը: Այս դեպքում է արդեն, որ բուն կյանքի ու նրա մասին ունեցած պատկերացումների հարաբերությունը պահանջում է ճիշտ համապատասխանություն: Խոսքը վերաբերում է ոչ թե նյութի գեղարվեստական վերարտադրման ձեւին, որ կյանքի բնական պատկերի համամասնությունների պահպանման հետ մեկտեղ կարող է դրսեւորվել նաեւ պայմանական կառուցվածքների ու վիճակների հեղինակային վերափոխումների տեսքով, այլ, առաջին հերթին, նյութի իմաստի խոր ըմբռնմանն ու նպատակաուղղվածությանը: Կյանքի ճշմարտության զգացողությունն ու այդ զգացողության ճշմարտացի վերարտադրումն են, որ հանրային կյանքում ապահովում են գրականության առաջատար դերը: Կյանքի ճշմարտությունն, ինչը, իր մեջ ներգրավելով մարդկային կենսագրության բազմաթիվ տարբերակներ, ի վերջո, կարողանում է գտնել այն գլխավորը, որ խտացնում է ժամանակի հարուստ պատկերը: Իսկ այդ գլխավորի հայտնաբերումը դրսեւորվում է հարցադրումների, կերպարների, զանազան մանրամասների ու նրբերանգների մի որոշակի կազմով, ինչով բնորոշվում են տվյալ ժամանակը, տվյալ ժամանակի մարդը, այդ մարդուց սերված հերոսը:

Ժամանակակից մարդու կերպարի կերտման ելակետերը բազմազան են ու տարբեր: Սակայն խոսքն այս դեպքում չի առնչվում այդ հարցին, այլ այն, թե ինչքանով են այդ բազմազան ու հարուստ մեկնաբանությունների մեջ հայտնագործվում ժամանակի ոգին, իրականության խոր ու բովանդակալից պատկերը: Ինչքանո՞վ է բարձր գրականության փաստ դառնում հանրային տեսակետից կարեւորություն ունեցող անհատի կերպարը:

Ժամանակակից մարդու գրական կերպարի կերտման գործում գլխավորն իրականության մեջ նրա ունեցած հանրային նշանակության ու արժեքի հարցն է, ինչը, սակայն, հանդես չի գալիս ինքնակա ձեւով: Հանրային նշանակության անհատն իր մեջ ներառում է կյանքի գլխավոր վիճակներն ու հարաբերությունները՝ կենցաղային «մանրուքներից», ընտանեկան փոխհարաբերություններից, աշխատանքային գործունեությունից մինչեւ ներաշխարհային բազում անդրադարձումներն ու հոգեկան տարատեսակ ապրումները: Նկարագրի հարուստ ընդգրկումն ամենեւին միակ նախապայմանը չէ ժամանակի ոգին վերարտադրելու համար, ուղղակի ավելի նպատակահարմար է, որ այս հիմքի վրա ձեւավորվի այսօրվա իրականությունն իր մեջ կրող անհատի կերպարը: Իրականությունը, ի վերջո, տարբեր բեկումներով արտացոլվում է ժամանակակից մարդու էության մեջ՝ անկախ նրա հոգեկան հարստությունից եւ հանրային կարեւորությունից: Կյանքի հարստությունը բացահայտվում է նաեւ սովորական, աննշան մարդկանց կենսագրության ու գրական կերպարի մեջ: Այդ ամենի առկայությունը, անշուշտ, հարստացնում է մեր պատկերացումները կյանքի մասին, սակայն դրա հետ մեկտեղ կա նաեւ ժամանակի համար գլխավորի, հիմնականի, բնորոշի խնդիրը: Ամենեւին պատահական չէ, որ Լերմոնտովն իր վեպն անվանել է «Մեր ժամանակի հերոսը»: Վերնագիրն ինքնին արդեն դիրքորոշում է եւ գեղարվեստական ծրագիր: Ահա այս ելակետից է, որ այդ վերնագիրը ցանկանում ես կիրառել նաեւ ժամանակակից գրականության վերաբերյալ եւ որոնել ու գտնել մեր ժամանակի հերոսին, այսօրվա հայ մարդուն, իր ժողովրդի պատմությունն ու այսօրվա իրական կյանքն իր մեջ կրող այն անհատին, որի նկարագիրը համատեղում է թե՛ ազգային կյանքի ու խնդիրների, թե՛ դարաշրջանի մտահոգությունների ու ցավերի եւ թե՛ իրականության հոգեկան, բարոյական դրսեւորումների հավաստի պատկերը:

Բարդ ու հարուստ կյանքով ապրող այսօրվա մարդը նոր ու դժվարին խնդիրներ է դնում գրականության առջեւ: Երեկվա պատկերացումներն այսօր այլեւս անելիք չունեն: Կյանքը հոսում ու շարժվում է առաջ եւ պահանջում, որ գրվեն հատկապես տվյալ ժամանակի վեպը, բանաստեղծությունն ու խորհրդածությունը, հակառակ դեպքում վաղն արդեն ուշ կլինի, իսկ ժամանակը կմնա առանց գեղարվեստական վավերացման:

1937 թ. ապրիլի 13-ի գրառումների մեջ նարեկացիական շնչով Չարենցն աղերսում էր իր ներշնչանքի մուսային. «Տուր ինձ, ո՛վ ապոդոնյան արեւ, նժարն այս հոգեւոր, որպեսզի կարողանամ ոչ միայն ցանկալ, այլեւ կատարել, ոչ միայն ձգտել, այլեւ – հասնել,– ոչ լոկ ընթանալ,– այլեւ – տալ ընթացք գիտակցական եւ անհեղլի…» (ԵԺ, VI, 490): Փաստորեն Չարենցը ձեւակերպում է իր մտքի, խոհի ստեղծագործական ներշնչանքի բռնկումները լիարժեքորեն, զարգացման բոլոր ընդգրկումներով վերարտադրում բարձրագույն գիտակցությունը:

Այդ գիտակցությունն այսօր ավելի խորությամբ պետք է արմատավորվի գրականության մեջ եւ դառնա ներքին կապ գրողի ու ընթերցողի միջեւ, այն ընթերցողի, որի պահանջները եւս հասնում են այդ գիտակցությանը:

Կյանքի ճշմարտացիությունը, իր գլխավոր արտացոլումը գտնելով տվյալ ժամանակին հատկանշական հարցադրումների մեջ, բացահայտելով նախկինում հայտնի եւ օգտագործված նյութի նոր, մինչեւ այդ չգիտակցված նրբերանգներ ու առանձնահատկություններ, իր կարեւորությունը պահպանում է նաեւ նյութի վերարտադրման ձեւի համակարգում: Ինչպիսին տվյալ ժամանակի մարդու մտածողությունն է ու զգացողությունների համակարգը, այդպիսին էլ պետք է լինի նրա գեղարվեստական համարժեքը: Հակառակ դեպքում, այսինքն՝ սոսկ նյութի ու հարցադրման ճիշտ վերարտադրությամբ, առանց այդ ամենի ներկայացման համապատասխան ձեւի՝ երկը չի ունենա արժանի հնչեղություն:

Այսօրվա մարդու գրական մեկնաբանության արտաքին շերտերից, որոշ դեպքերում նկատվող ճառային, լոզունգային, գովազդային մեկնաբանություններից, ամեն տեսակի բնական հակասությունները համահարթեցնող միտումներից, նրա բնավորության ու նկարագրի բացահայտման միակողմանի, անլիարժեք լուծումներից անհրաժեշտ է թափանցել խորքերը, ընդգրկել մարդու կյանքն ամբողջությամբ եւ ստեղծել մեր օրերի լայնածավալ, ընդգրկուն ու համապարփակ պատկերը:

Կյանքի բնական հարստության ընձեռած հնարավորություններից ելնելով՝ գրականությունը՝ որպես արվեստների մայր, պետք է կարողանա բավարարել բարձր զարգացում ունեցող ժամանակակից անհատի հոգեւոր պահանջմունքները, հակառակ դեպքում ամեն ինչ կդառնա ինքնանպատակ՝ նեղ շրջանակների սեփականություն, եւ աստիճանաբար կկորցնի իր հանրային-քաղաքացիական նշանակությունն ու ներգործման ուժը: Այնպես որ, գրական որոնումների մեջ հարկավոր է խուսափել ստեղծագործական փակուղիներից եւ կյանքի «կոշտ ու կոպիտ» իրականությամբ ստուգել գրվածքի պիտանիությունն ու կենսունակությունը: Գրականությունը գործ ունի տարբեր մասնագիտության եւ կարողության տեր մարդկանց հետ, եւ ի վերջո՝ գրականության լավագույն դրսեւորումն է, որ խտացնում է ժամանակի մտայնությունը եւ բոլորի համար ստեղծում բոլորին միավորող մի հոգեւոր հայրենիք:

Մեր գրավոր ու բանավոր զրույցների ընթացքում, խոսելով տարբեր հարցերի մասին, շատ քիչ դեպքերում ենք փորձում անդրադառնալ գլխավորին, հիմնականին: Իսկ գլխավորը, առաջին հերթին, գեղարվեստական ավարտուն ու մնայուն արժեքն է: Ժամանակը, առանց հաշվի առնելու մինչեւ գեղարվեստական երկն ընկած դժվարությունները, ստիպում է թվարկել այն գրողների անունները, որոնք բնորոշում են ժամանակի գեղարվեստական զարգացման աստիճանը:

Այս խնդիրներն առաջադրվում են ճշտելու ոչ այնքան ընթացիկ գրականության որոշակի նպատակը, այլ, ինչպես Սերվանտեսն է ձեւակերպել «Դոն Կիխոտ»-ում, «նպատակի նպատակը»: ➥ *էջ 4*

Դրվագներ Վան-Վասպուրականում Արմենական, Հնչակյան եւ Դաշնակցական կուսակցությունների գործունեությունից



➥ *էջ 2*

Առավել կարճը Դերիկ–Վան ուղեգիծն էր, որը կազմում էր շուրջ 100 կմ: Արմենականներն ու դաշնակցականները, թիկունք ընտրելով Սալմաստն ու Խոյը, որպես կենտրոնավայր ընտրում են Դերիկի հինավուրց վանքը: Դերիկ–Վան ճանապարհը կիսով չափ կրճատում էր տարածությունը դեպի Էրգիր:

Այդ վանքում տարիներ առաջ պաշտոնավարել էին Հովհաննես Բազունի եւ վանվասպուրականցիների շրջանում մեծ հարգանք վայելող Արսեն Թոխմախյան վարդապետները, որոնք, սակայն, չդիմանալով շրջակա քրդական ցեղախմբերի ճնշումներին, թողել ու հեռացել էին: Վանքը դարձել էր ապաստարան մազրիկցի, շամսկցի, ալանդցի, ավտոցի քրդական կռվասեր ցեղերի համար: Վանքին անմիջապես կից կար փոքրիկ քրդական գյուղ, իսկ մի պարսիկ «բանջարանոց մը պատրաստած էր... վանքը ամբարի մը վերածած էր եւ տիրացած անոր» (*Յուշեր Արմենակ Եկարեանի (այնուհետեւ՝ Եկարեան Ա.), Գահիրէ, 1947, էջ 23*):

Արմենական կենտրոնական մարմինը Դերիկի վերաբերյալ որոշում կայացնելուց հետո կտրիճների մի խումբ է ուղարկում, որը գրավում է վանքը, ուսումնասիրում շրջակայքը եւ ամուր հիմնավորվում:

Արմենական փորձառու մարտիկներ Արմենակ Եկարյանի, Մովսեսի (Միքայել Իշխանյան), Ֆարհատի (Գրիգոր Արարքցյան) հետ այստեղ են գալիս անվախ կտրիճներ Չաթոն ու Շերոն, ինչպես նաեւ մի խումբ դաշնակցական գործիչներ, որոնց թվում՝ Վարդանը, սեւքարեցի Սաքոն, Նիկոլ Դումանը: Շրջակա քրդական ցեղերը մի քանի անգամ փորձում են գրավել ու ավերել Դերիկի վանքը, բայց ապարդյուն:

Այն դառնում է հուսալի ապաստարան, մի մշտական գործող կայան արմենական ու դաշնակցական զինատար խմբերի համար (*տե՛ս Գեւորգյան Հ., Ազատագրական պայքարի ռազմավարությունը եւ էջեր նրա հերոսապատումից, Ե., 2012 թ., էջ 28–34*):

Դաշնակցականներն ամրացնում են վանքի պարիսպները: Արմենականները կարողանում են Թավրիզի թեմի առաջնորդ Ստեփանոս եպս Մխիթարյանի միջոցով պաշտոնապես վավերացնել վանքի հանդեպ իրենց ունեցած իրավունքները: Հետզհետե Դերիկ–Վան ուղեգիծը դարձավ «կյանքի ճանապարհ» հայ հեղափոխականների համար: Այո՛, դա այդպես է, չչափազանցված, քանզի առանց երկիր զենք ներմուծելու՝ հեղափոխական-ազատագրական խմբերի եւ կուսակցությունների համար անկարելի կլինեին որեւէ լուրջ գործողության ձեռնարկումը եւ հայության անվտանգության ապահովումը: Սակայն շուտով Դերիկի սահմանային հատվածում կատարվող աշխույժ եռուզեռն ու բավական ակտիվ անցուդարձը գրավեցին թուրքական իշխանությունների ուշադրությունը եւ նրանց «...Սալմաստի ու Թաւրիզի հիւպատաներուն եռանդուն աշխատակցութեամբը, համիտիէ ալայներու ուշադրութիւնն ալ լարուեցաւ հայերուս եւ մասնաւորաբար տէրիկցիներու վրայ» (*Եկարեան Ա., նշվ. աշխ., էջ 44*):

Քրդական ցեղախմբերի շարունակական հարձակումների եւ ճանապարհային կարեւոր ուղիներում հակառակորդի կողմից սարքված դավադրությունների արդյունքում Դերիկը կորցնում է իր ունեցած նախկին ազդեցությունը եւ նշանակությունը: ➥ *էջ 5*

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ

Սկիզբը՝ թիվ 14



XIV դ. Տաթեւի վանքը գիտամշակութային վերելք է ապրել: Այստեղ են հավաքվել ժամանակի աչքի ընկնող աստվածաբանները, փիլիսոփաները, աստղագետները, տրամաբանները, երաժիշտները, նկարիչները: Կրոնավորների թիվը գնալով մեծացել է՝ հասնելով մոտ 1000-ի: Վերակառուցվել է վանական դպրոցը, 895 թ. հիմնված վարդապետարանը դարձել է համահայկական մշակութային կենտրոն, դրվել են նոր՝ բարձր տիպի դպրոցի՝ Տաթեւի մեծահռչակ համալսարանի հիմքերը:

Միջնադարյան Հայաստանի հռչակավոր ուսումնագիտական կենտրոն Տաթեւի համալսարանը մատենագրության մեջ հիշատակվում է 1390 թվականից: Համալսարանը գործել է մինչեւ 1435 թ.: Տաթեւի համալսարանը հովանավորել են Օրբելյան իշխանները եւ Սյունյաց մետրոպոլիտները: Համալսարանը հիմնադրել է Հովհան Որոտնեցին (1315–1388 թթ.): Գլաձորի համալսարանի փակվելուց հետո Որոտնեցին տեղափոխվել է Որոտնավանք, հիմնել դպրոց, ապա հաստատվել Տաթեւի վանքում եւ, վերակառուցելով Տաթեւի կրթարան-վարդապետարանը, հիմք դրել նոր՝ բարձրագույն դպրոցի՝ համալսարանի: Ուսման տեւողությունը եղել է 7–8 տարի (չհաշված քահանայական կրթության տարիները): Պատրաստել են վարդապետներ, քարոզիչներ, մանկավարժներ, գրչության արվեստի մասնագետներ, երաժիշտներ: Տաթեւի համալսարանն ունեցել է երեք լսարան (ուսումնարան): Համալսարանում սաներն ուսումնասիրել են մայրենի լեզու, գրականություն, պատմություն, թվաբանություն, երգ եւ երաժշտություն, երաժշտության տեսություն, Ս. Գիրք, աստվածաբանություն, իմաստասիրություն (փիլիսոփայություն), ճարտասանություն, քերականություն, քերթողական արվեստ (պոետիկա), մանկավարժություն, գրչության արվեստ, գեղագրություն, գրքերի գեղարվեստական ձեւավորում, մանրանկարչություն եւ այլն: Համալսարանում որպես դասագիրք օգտագործվել են Հին եւ Նոր Կտակարանները, Եկեղեցու հայրերի, ինչպես նաեւ Արիստոտելի, Փիլոն Ալեքսանդրացու, Պորփյուրի, Գրիգոր Նյուսացու, Նեմեսիոս Եմեսացու, Եվագր Պոնտացու, Գրիգոր Լուսավորչի, Հովհան Օձնեցու, Հովհան Դամասկացու, Կեղծ Դիոնիսիոս Արեոպագացու եւ այլոց փիլիսոփայական, աստվածաբանական աշխատությունների մեկնությունները, լուծմունքները եւ թարգմանությունները: Լայնորեն օգտագործելով հայերեն եւ հունարեն մասնագիտական գրականությունը՝ մշակել են նոր ծրագրեր եւ դասընթացներ, զարգացրել մի շարք գիտություններ ու արվեստներ: Տաթեւի համալսարանն ունեցել է կանոնադրություն, ուսումնագիտական աստիճանավորում: Սովորելու են եկել ոչ միայն Սյունիքից, այլեւ Եկեղյաց գավառից, Այրարատ նահանգից, Կիլիկյան Հայաստանից, Վասպուրականից, Տարոնից, Արցախից, Ուտիքից, Պարսկահայքից, Ղրիմից եւ այլ վայրերից: Համալսարանը մշտապես ունեցել է մեծ թվով ուսանողներ (150–300 եւ ավելի):

Հովհան Որոտնեցին մահից առաջ (1386 թ.) իրեն փոխարինող եւ Տաթեւի վարդապետարանի ուսուցչապետ (ռաբունապետ) է կարգել իր աշակերտ Գրիգոր Տաթեւացուն (1346–1409 թթ.): Գրիգոր Տաթեւացին ոչ միայն նշանավոր աստվածաբան, գիտնական-մանկավարժ, փիլիսոփա էր, այլեւ մանրանկարիչ ու երաժիշտ: Պահպանվել է 1297 թ. գրված մի Ավետարան (Մատենադարան, ձեռագիր հ. 7482), որը 1378 թ. նկարազարդել է Գրիգոր Տաթեւացին:

Տաթեւացու ուսուցչապետության շրջանում Տաթեւի համալսարանը ծաղկում է ապրել, դարձել գիտության, մշակույթի, արվեստի, հոգեւոր կյանքի համահայկական կենտրոն, Հայոց Եկեղեցու ուղղափառ դավանության եւ ավանդության պաշտպանության ամրոց: Տաթեւի համալսարանի գիտնական վարդապետները, Գրիգոր Տաթեւացու գլխավորությամբ, անհաշտ պայքար են մղել Հայաստան ներթափանցած կաթոլիկ քարոզիչների՝ միսիոներների եւ միարարների (ունիթորներ) դեմ: ➥ *էջ 7*

Վաթսունականների արձակագիրներ.
Ժամանակը եւ հերոսը

➥ *էջ 3*

«Նպատակի նպատակը», ի վերջո, մնայուն ու պիտանի երկն է, ինչի համար եւ պետք է գործադրվի գրողի ամբողջ կարողությունը: Եվ որպեսզի կարողանանք վերջնական, մնայուն արժեքի չափանիշով նայել արած-չարածին, պետք է փորձենք (նաեւ ունակ լինենք) գրականության պատմության փորձից բխող հայացք նետել ընթացիկ գրականությանը եւ ճշտել տեղն ու դերը: Սակայն չպետք է մոռանալ նաեւ, որ այդ չափանիշն այլ առանձնահատկություններ է դրսեւորում ընթացիկ գրական շարժումն ուսումնասիրելիս:

Ժամանակակից կյանքն իրենց մեջ կրող հերոսների նկարագրի բացահայտման առումով այսօրվա հայ արձակը քննության բազմաշերտ ու տարարժեք նյութ է տալիս:

Գ.

Չմոռանանք՝ վաթսունականների հայ արձակն առաջնորդվում էր խորհրդային գրականության զարգացման ընդհանուր միտումներով: Իսկ ժամանակի արձակն իրենից ներկայացնում է վերին աստիճանի բարդ ու հետաքրքրական մի պատկեր: Միութենական ընդգրկումով լայն խոսակցություն էր ընթանում թե՛ ռուսական ժամանակակից արձակի՝ հատկապես 60-ականների սերնդի եւ թե՛ միութենական այլ հանրապետություններում ստեղծագործող առանձին արձակագիրների շուրջ: Այս առումով հատկապես հոլովվում են Վասիլի Շուկշինի, Ֆյոդոր Աբրամովի, Վիկտոր Աստաֆեւի, Վասիլի Բելովի, Անդրեյ Բիտովի, Յուրի Տրիֆոնովի, Գրիգորի Բակլանովի, Վալենտին Ռասպուտինի, Յուրի Բոնդարեւի, Վլադիմիր Բոգոմոլովի, Վլադիմիր Լիչուտինի, Ալեսյա Ադամովիչի, Չինգիզ Այթմատովի, Վասիլ Բիկովի, Նոդար Դումբաձեի, Վիլ Լիպատովի, Միկոլաս Սլուցկիսի եւ այլ գրողների անուններ:

Ինչ էր իրենից ներկայացնում ժամանակի համամիութենական արձակը, ինչ ստեղծագործական առնչություններ կարելի է տեսնել միութենական եւ հայ արձակի միջեւ: Հարցադրմամբ ու ընդգրկմամբ բավականին բարդ ու դժվարին, բայց նաեւ խիստ հետաքրքրական անակնկալներ հարուցող մի խնդիր, որ չպետք է շրջանցել: Կենսական ինչ նյութ եւ ինչ հիմնախնդիրներ են շրջանառում նշված գրողները:

Վասիլի Շուկշինը պատմվածքներից շատերում («Քեռի Երմոլայը», «Խոհեր», «Երկրացիներ», «Գերեզմանոցում», «Վարպետներ» եւ այլն) եւ կինովիպակներում («Կարմիր բռինչ», «Դրկից-դրացիներ») ստեղծում է խիստ կենսական վիճակներում ապրող ու գործող հերոսներ, որոնք պատկանում են, այսպես կոչված, «մանր», «փոքր» մարդկանց շարքին: Սակայն Շուկշինն իր կերպարների հոգեբանությունը բացահայտում է այնպիսի կենսահայեցողությամբ, որ նրա փոքր, երբեմն աննշան հերոսները կարծես մեծանում, աճում, բարձրանում են իրենք իրենցից, հաղթահարում այն վիճակները, որոնք ստորացրել ու խեղճացրել են նրանց եւ, ի վերջո, դուրս գալիս ոգու վեհ ու բարձր մի ոլորտ, ուր նրանք դժվարությամբ ապրած կյանքը դարձնում են տոնական հանդիսություն: Ճիշտ է նկատում Իգոր Զոլոտուսկին՝ Շուկշինը ռուսական արվեստի մեջ վերակոչում է ողբերգազավեշտը (տրագիկոմեդիան): Շուկշինը գրական իրողություն է դարձնում ժողովրդական կյանքի անսպառ հարստությունը եւ նույն քննադատի դիտողությամբ ստեղծում մեր ժամանակի «փոքր էպոսը»՝ կարեւորելով «հոգեւոր տարածության» անհրաժեշտությունը (*«Վոպրոսի լիտերատուրի», 1975, թիվ 10, էջ 6–9*):

Լայն հետաքրքրություն են ներկայացնում Անդրեյ Բիտովի ստեղծագործությունները: Նրա «Անիվ», «Զինվոր», «Ինչ է եղել, ինչ կա, ինչ է լինելու…», «Հայաստանի դասերը» ստեղծագործություններում խորությամբ արծարծվում են արդիական նշանակության էական հարցեր: «Հայաստանի դասերը» գործը Բիտովի ինքնաճանաչողության ընթացքն է: Ժամանակի, նյութի եւ հեղինակի հանդիպադրումը բացահայտում են մի նոր ու ինքնատիպ աշխարհ: «Ինչ է եղել…» վիպակում բոլոր հերոսներն ակնդետ զննում են իրար եւ այդ զննումներով հայտնաբերում իրենք իրենց: Անդրեյ Բիտովը ժամանակակից ռուսական արձակում ուժեղացնում է գեղարվեստական ինքնաճանաչման փիլիսոփայական կողմը:

Ռուսական արձակի վերջին տարիների նվաճումներից է Վալենտին Ռասպուտինի «Ապրիր եւ հիշիր» վիպակը: Պատերազմական նյութի բացահայտումն ունի հոգեբանական ընթացք, ի հայտ է բերում դրամատիկ ու ողբերգական մի վիճակ եւ այդ վիճակի մեջ գործող հերոսների: Նկարագրվում են պատերազմի ու հետպատերազմյան կյանքի առաջին ամիսները: Վիպակի հերոսուհին՝ Նաստյոնան, թաքցնելով դասալիք ամուսնուն, ապրում է հոգեբանական ծանր դրամա եւ, ի վերջո, ամուսնու մեղքը քավում իր կյանքի գնով՝ իրեն նետելով Անգարայի վարար ջրերի մեջ: Բարձրացող հոգեբանության տեր մարդու հերոսական ու ողբերգական կերպար է ստեղծում հեղինակը:



Ժամանակակից ռուսական արձակի վիճահարույց գործերից մեկը Յուրի Բոնդարեւի «Եզերք» վեպն է. արտասահմանյան կյանքի նկարագրությամբ՝ համբուրգյան թաղամասեր, գիշերային կաբարեներ, ուրվագծվում են մտավորականության՝ բանավեճերով հարուստ կյանքի որոշակի դրվագներ, եւ դրանով իսկ՝ արծարծվում ժամանակի համար կարեւորություն ունեցող բարոյագաղափարական բնույթի հարցեր: Կյանքի տարբեր շերտերի՝ պատերազմ, ժամանակակից կյանք, սիրային հարաբերություններ, հաջող միաձուլմամբ հեղինակն ստեղծում է մեր օրերի հոգսերով ապրող մարդկանց կերպարներ: Վեպը հարուստ է գաղափարական հագեցվածությամբ եւ ռուս քննադատներից Վ. Սոկոլովի բնորոշմամբ՝ «փիլիսոփայական-քաղաքական» երկ է:

Ժամանակակից ռուսական արձակում զգալի տեղ ունի նաեւ քնարական շունչը: Դրա լավագույն արտահայտությունը Վասիլի Բելովի ստեղծագործությունն է եւ հատկապես «Սովորական գործ» ու «Գայլերի ոհմակ» վիպակները, որոնցում պատերազմական տեսադաշտում ներկայացվում են վեհ ու հերոսական պահվածքի տեր մի քանի հաջող կերպարներ:

Շատ են ռուսական արձակի հետաքրքրությունն ներկայացնող գործերը: Սպառել անհնար է: Այսօր միութենական նշանակությամբ շարունակում են խոսել Չինգիզ Այթմատովի եւ Նոդար Դումբաձեի մասին: Չինգիզ Այթմատովն իրեն ծանոթ եւ խիստ հարազատ նյութի պատկերումով բացահայտում է ժամանակի շատ կարեւոր հիմնախնդիրներ: Ըստ էության՝ դրանով էլ պայմանավորված են նրա ստեղծագործության համատարած ճանաչումն ու ընդունումը: Իր արդեն հայտնի գործերին նա վերջին շրջանում ավելացրեց «Սպիտակ շոգենավը» վիպակը, որի մեջ նրբորեն միահյուսված են մանկան երազներն ու ձգտումները, եւ պատկերված է դժվարին կյանքի ցավը: Ողբերգական մի կերպար է Ճապուկ Մոմունը, երազներից ու պատրանքներից ստեղծված մի կերպար՝ Տղան: Տղայի ռոմանտիկ պատկերացումները բախվում են իրականությանը եւ աղավաղվում: Չինգիզ Այթմատովը վերին աստիճանի նուրբ ու ներգործող ազդակներով է ներկայացնում իրականության դաժան դեմքը:

Հաջողություններ կան վրացական արձակում, որի ներկայացուցիչներից Նոդար Դումբաձեն արժանացել է համամիութենական ճանաչման: «Սպիտակ դրոշակներ» վեպում թիֆլիսյան բանտի կյանքի պատկերումով նա արծարծում է իրականությանը բնորոշ հուզիչ հարցեր: Պատահաբար բանտարկվում է մի ազնիվ երիտասարդ՝ Զազա Նակաշիձեն, որ բանտում շփվում է տարբեր հանցագործների հետ: Բախումը հերոսների միջեւ առաջանում է այն ժամանակ, երբ նրանք խորհում են մարդու գոյության մասին, չարի ու բարու, լավի ու վատի մասին: Ինչպես Այթմատովի սպիտակ շոգենավը, այնպես էլ Դումբաձեի սպիտակ դրոշակներն ունեն գրեթե նույն պայմանական խորհուրդը՝ դրանք դիտվում են որպես բարության, սիրո խորհրդանիշներ:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Զարեհ Որբունու պատմվածքները

Սկիզբը՝ թիվ 8–10, 12–14

Հայրենիքից հեռու, օտար ափերում դեգերող երիտասարդը հայտնվել է տառապանքների մեջ: Կյանքն անցկացնելով տարբեր կանանց գրկում, ոգելից խմիչքների մեջ վիշտը խեղդելով՝ քարշ է տալիս իր միօրինակ առօրյան: Սակայն օրերից մի օր հանկարծ սթափվում է՝ հասկանալով, որ եթե այդպես շարունակի, մարդկային արժանիքները կկորցնի՝ չտարբերվելով անասունից:

Զ. Որբունու պատմվածքների հերոսները տառապում են առաջին հերթին օտարության մթնոլորտում՝ հայրենիքից հեռու: Տարագրությունը նրանց կյանքը դարձնում է հալածանքների շղթա՝ կտրելով կենսական արմատներից: Կյանքի իրողություններն ու հանգամանքները նրանց առօրյան լցնում են վշտով ու կեղեքման զգացումներով: Անձնական վիշտը միահյուսվում է անօթեւան ու անհայրենիք կարգավիճակին: Հայրենիքից հեռու, հալածված տերեւի նման, հերոսները քարշ են տալիս իրենց տառապալից առօրյան՝ գիտակցելով ու խրապես ապրելով վիշտը, որը գրողի պատմվածքներում հաճախ նաեւ անանձնական դրսեւորումներ ունի:

Գուրգեն Մահարուն հասցեագրված նամակներից մեկում Զ. Որբունին, անդրադառնալով իր հոգեվիճակին, ապրումներին, գրում է. «Պէտք է նշեմ, մանաւանդ, երրորդը, որ մնացած է Օրտուէն՝ Գոհարիկը: Օ՛, այդ իմ առաջին տառապանքս, այդ աստուածանուէր տառապանքս, որ Գոհարիկին սիրահարութիւնս եղաւ: Գոհարիկ Վարդերեսեան: Չեմ գիտեր՝ տմ՞սը, թէ՞ տասնմէկ տարեկան էր, այդ սէրը դժոխքի կրակներուն մէջ նետած էր ինծի: Այնքան կը պաշտէի կրակներուն այդ մրրկող առաքինութիւնը: Այսօր, երբ դեռ կը մտածեմ կեանքիս վրայ, կը տեսնեմ, որ բոլոր սէրերս եղած են Գոհարիկին կրկնութիւնները: Սեպասթաբոլը, այն հրաշալի ռուս աղջիկը, որուն անունը մոռցած եմ, Մելինէն, Սիւզանը, Արշալոյսը, Օտեթը եւ Էլիզապեթը, որ եղաւ մնայուն կողակիցս, ինծի հասկցնել կու տան, թե ի՞նչ կրցած են ըլլալ Թէքէեանի հոգեկան ապրումները, երբ կը գրէր՝

«Ես սիրեցի, բայց ոչ ոք սիրածներէս գիտցաւ, թե զինքը որքան սիրեցի»:

Այդ լուռ սէրերը, լռութեան մէջ թաւալող տառապանքը մարդուս ամենամեծ հարստութիւնն է: Ինքնաճանաչման, մարդաճանաչման եւ ազնուացման միակ գործողութիւնը: Մի՛ կարծեր, որ այս սէրերու միամտութիւնս մազոշիստական հակում մըն են եւ միակ դրութիւնը: Եղած եմ սինիք տոնժուան, այդ սիրոյ վայելքը մարդս կ՚անասնացնէ, անոր տուած դողը կը թաղուի նոյն վայրկեանին մէջ՝ Վեզուվին վրա ձգելով դառնութիւն: Ողորմած հոգի Արշամ Տատրեանը կը գրէր ինծի, որ միտք ունէր գրելու ուսումնասիրութիւն մը գրականութեանս մէջ իմ սիրո ըմբռնումիս մասին: Եւ դեռ անոր մահուանը շատ բան չէի գրած, բայց Արշամը սուր միտք ու աչք ունէր: Մտադրած էր նաեւ գրել մինակութեան ըմբռնումիս վրա, կ՚ըսէր «մինակութիւն» եւ ոչ թե «առանձնութիւն» (*http://inknagir.org/?p=6644, Կենսագրական շաղակրատութիւն Գ. Մահարիի հետ*):

Ուշագրավ է գրողի բացատրությունը. սիրո վայելքն անասնացնում է մարդուն, բայց միեւնույն ժամանակ մաքրագործում է նրան, ազնվացնում, ինքնաճանաչման մղում: Տառապանքի այդ նկարագրությունը, ինքնադատությունը տեսնում ենք նաեւ «Գոհարիկ» պատմվածքի հերոսի դեպքում: Չնայած հերոսը զգում է, որ սխալ կյանք է վարում՝ սրճարաններում, բարերում բազմաթիվ կանանց հետ իր գոյությունը քարշ տալով, բայց չի կորցնում այդ ինքնաճանաչման, ազնվացման հատկանիշը:

«Անունը» պատմվածքն էլ ինքնակենսագրական ակունքներ ունի: Տառապող հերոսը Որբունին է: Նրա համար կյանքի խռովահույզ փոթորկում Գոհարիկի անունն անգամ արտասանելը դառնում էր փրկություն: Գոհարիկի հետ էին կապված գրողի ազնիվ ու վեհ զգացմունքները, երազանքներն ու մտորումները: «Կյանքի այս խռովայույզ կտորիկը իրականանալու համար գլխավոր մղիչը հանդիսացաւ Գոհարիկին անունս արտասանելը: Անոր շրթունքները բացուեցան վարդի մը պէս ու նուագային առոգանութեամբ մը հնչեցուցին անունս իր բերնին մէջ: Անհանգստութիւն մը եկաւ, նստաւ սրտիս մէջ ու սկսաւ անընդհատ կրծել զայն: Ինքնակորոյս՝ պահ մը, որ բովանդակ էութիւնս տարրալուծուեցաւ...» (*Զ. Որբունի, Պատմուածքներ, էջ 16*):

Ինչպես երեկոն է դանդաղորեն, վայրկյան առ վայրկյան ստվերում ցերեկվա լույսը, այնպես էլ Գոհարիկի անունն արտաբերելն է բացում գրողի հոգու դռները: Նրա հետ է կապված ամեն լավ բան: ➥ *էջ 6*

Դրվագներ Վան-Վասպուրականում Արմենական, Հնչակյան եւ Դաշնակցական կուսակցությունների գործունեությունից

➥ *էջ 2, 3*

Քրդական խաժամուժի հետ զինատար խմբերի ունեցած ընդհարումների ժամանակ արմենականներից եւ դաշնակցականներից զոհվում են լավ պատրաստված, ընտիր ռազմնկներ, որոնց վերաբերյալ այնքան առասպելական պատմություններ էին պատմում քրդերն իրենց առօրյա զրույցներում:

Անհրաժեշտ է նշել, որ զինատար խմբերի կազմակերպման եւ զենքի փոխադրության գործին լուրջ ուշադրություն էին դարձնում թե՛ արմենականների, թե՛ հնչակների ու դաշնակցականների վարիչ մարմինները: Վերջիններս նախապես աշխատանքներ էին տարել եւ իրենց տրամադրության ներքո ունեին ճանապարհների յուրաքանչյուր ծակուծուկը լավ սերտած եւ բոլոր նրբություններին մանրազնին տիրապետող ուղեցույցներ (վալատներ), եւ բազմաթիվ զինատար խմբեր «անոնց կը պարտին իրենց կյանքը» (*Նաթանեան Մ., Արմենական կուսակցութիւնը, Գահիրէ, 1990 թ., էջ 28*):

Զենքի փոխադրության գործի անխափան կազմակերպման համար գրեթե օգտագործվում էր ամեն ինչ: Ճանապարհների հարմար կետերում ստեղծվում են փոքրիկ կայաններ՝ մանրածախ խանութների քողի ներքո:

Արմենական, հնչակյան եւ դաշնակցական կուսակցությունների միջեւ սերտ փոխհամագործակցություն ձեւավորվեց հատկապես 1895–1896 թվականներին:

1895 թվականի աշնանը տագնապալից վիճակ ստեղծվեց Վանում: Բոլորն էլ զգում էին, որ թուրքական իշխանությունները պատրաստվում են հայ բնակչության հետ հաշվեհարդար տեսնելու: Ինքնապաշտպանության գործի պատասխանատուները եւս տենդագին ջանքեր էին թափում՝ դիմակայելու վերահաս աղետին: Վանի հայության տարբեր խավերի շրջանում հանգանակություն է կատարվում, որպեսզի զենքի ու զինամթերքի նոր պաշարներ հասցվեն Վան:

1895 թ. ուշ աշնանը Լեւոն Զրվանդյանի եւ Տիգրան Տերոյանի (Վազգեն) երկու խմբերը ուղեւորվում են Պարսկաստան՝ զենք գնելու եւ փոխադրելու «...իրենց խումբերէն գոյացած դրամովը»: Զինատար խմբերը հաջողությամբ տեղ են հասնում, իսկ վերադարձին նրանց միանում են տեղի ընկերներից շատերը, որոնք չէին ցանկանում «...հեռուէն հանդիսատես ըլլալ իրենց հայրենիքի փչացման (*Եկարեան Ա., Նշվ. աշխ., էջ 69*):

Արմենականներին դեպի Վան առաջնորդում են Գր. Պեզոիկյանը եւ Ուսթա Փանոսը: Այս խմբի կազմում էին «...մեր լաւ կռուող ընկերներէն Քանքանեան Օհաննէսը, Ուզուն Օհաննէսը, Սէթ եւ հաւթվանցի Աւետիսը եւ Արմենական կամաւորներ՝ Աւետիքը, Զաքարը եւ Մարտիրոսը: Այս խումբին կը միանան դաշնակցական Նիկոլը եւ Յարութիւնը եւ Պողազ Քէսէն գիւղի մեր տղաներէն Թովմասը, Մարտիրոսը, Վարդանը եւ Սարգիսը՝ իբրեւ առաջնորդ» (*նույն տեղում*): Խումբը, որը, ըստ Ա. Եկարյանի, բաղկացած էր 35 մարտիկներից, 1895 թ. նոյեմբերի 25-ին անցնում է պարսկա-թուրքական սահմանը:

Ըստ Հ. Յ. Դ. գործիչ Սարգիս Մեհրապյանի (Խանասորա Վարդան)՝ «խումբը բաղկացած էր 60 հոգուց, բոլորսն էլ զինված մոսին հրացաններով՝ դիմում են Վան» (*Խանասորա Վարդանի հիշատակարանը, Երեւան, 1992 թ., էջ 93*):

Ի դեպ, այս նույն իրադարձության, ինչպես նաեւ այլ դեպքերի վերաբերյալ արմենական ու դաշնակցական գործիչների երկերում բազմաթիվ փաստեր որոշակիորեն հակասական են, նաեւ իրարամերժ:

Սահմանն անցնելուց հետո Սարայի մոտ, բնության քմահաճույքով, սկսվում է ձյունախառն ուժգին մրրիկ, որից զինատար խմբի անդամներից ոմանք կորցնում են ճամփան: Սաստիկ ցրտից որոշ հայդուկների ձեռքերն ու ոտքերը սառչում են: Վազգենը, կորցնելով հետնապահ մասին եւ շարժվելով առաջ, մտնում է մի գոմ: Քրդերը նկատում են խմբին եւ աղմուկ-աղաղակով շրջապատում: Սկսվում է անհավասար, հերոսական կռիվ: Հայ մարտիկները տալիս են մի քանի զոհ: Գիշերվա մթությունից օգտվելով՝ խմբի անդամները շարժվում են առաջ եւ հասնում Բողազ-Քեսան, որտեղ նորից շրջապատվում են քրդական հրոսակների կողմից: Վերջիններս չոր խոտի խրձեր են վառում այն գոմի դռան առջեւ, ուր պաշարված էին հայորդի քաջերը: Չկամենալով ողջ-ողջ խեղդվել՝ հայ մարտիկները դիմում են հանդուգն քայլի. «Փամփուշտները դնում են հրացանների մեջ եւ հանկարծ, իրար հետեւից դուրս են թռչում գոմից՝ անընդհատ կրակ թափելով աջ ու ձախ» (*նույն տեղում, էջ 95*): Քրդերը շփոթության են մատնվում եւ սկսում դեսուդեն փախչել՝ տալով տասնյակ զոհեր: Հայ մարտիկներին հաջողվում է այդ կռվում գրավել վեց հրացան եւ ութ ձի: Բողազ-Քեսենի կռվին մասնակցած եւ անօրինակ խիզախություն դրսեւորած դաշնակցական գործիչ Նիկոլ Տեր-Հովհաննիսյանն ստացավ Դուման մականունը:

Վան վերադարձին վեճ է ծագում բերված զենքերի պատկանելության շուրջ: Հ. Յ. Դ. ականատես գործիչը նշում է, որ Սարայի կռվի ժամանակ արմենականների հրացանների զգալի մասը խափանվել էր: Նրանք մտածեմ կեանքիս վրայ, կը տեսնեմ, որ բոլոր սէրերս եղած են Գոհարիկին կրկնութիւնները: Սեպասթաբոլը, այն հրաշալի ռուս աղջիկը, որուն անունը մոռցած եմ, Մելինէն, Սիւզանը, Արշալոյսը, Օտեթը եւ Էլիզապեթը, որ եղաւ մնայուն կողակիցս, ինծի հասկցնել կու տան, թե ի՞նչ կրցած են ըլլալ Թէքէեանի հոգեկան ապրումները, երբ կը գրէր՝

«Ես սիրեցի, բայց ոչ ոք սիրածներէս գիտցաւ, թե զինքը որքան սիրեցի»:

Այդ լուռ սէրերը, լռութեան մէջ թաւալող տառապանքը մարդուս ամենամեծ հարստութիւնն է: Ինքնաճանաչման, մարդաճանաչման եւ ազնուացման միակ գործողութիւնը: Մի՛ կարծեր, որ այս սէրերու միամտութիւնս մազոշիստական հակում մըն են եւ միակ դրութիւնը: Եղած եմ սինիք տոնժուան, այդ սիրոյ վայելքը մարդս կ՚անասնացնէ, անոր տուած դողը կը թաղուի նոյն վայրկեանին մէջ՝ Վեզուվին վրա ձգելով դառնութիւն: Ողորմած հոգի Արշամ Տատրեանը կը գրէր ինծի, որ միտք ունէր գրելու ուսումնասիրութիւն մը գրականութեանս մէջ իմ սիրո ըմբռնումիս մասին: Եւ դեռ անոր մահուանը շատ բան չէի գրած, բայց Արշամը սուր միտք ու աչք ունէր: Մտադրած էր նաեւ գրել մինակութեան ըմբռնումիս վրա, կ՚ըսէր «մինակութիւն» եւ ոչ թե «առանձնութիւն» (*http://inknagir.org/?p=6644, Կենսագրական շաղակրատութիւն Գ. Մահարիի հետ*):

Ուշագրավ է գրողի բացատրությունը. սիրո վայելքն անասնացնում է մարդուն, բայց միեւնույն ժամանակ մաքրագործում է նրան, ազնվացնում, ինքնաճանաչման մղում: Տառապանքի այդ նկարագրությունը, ինքնադատությունը տեսնում ենք նաեւ «Գոհարիկ» պատմվածքի հերոսի դեպքում: Չնայած հերոսը զգում է, որ սխալ կյանք է վարում՝ սրճարաններում, բարերում բազմաթիվ կանանց հետ իր գոյությունը քարշ տալով, բայց չի կորցնում այդ ինքնաճանաչման, ազնվացման հատկանիշը:

«Անունը» պատմվածքն էլ ինքնակենսագրական ակունքներ ունի: Տառապող հերոսը Որբունին է: Նրա համար կյանքի խռովահույզ փոթորկում Գոհարիկի անունն անգամ արտասանելը դառնում էր փրկություն: Գոհարիկի հետ էին կապված գրողի ազնիվ ու վեհ զգացմունքները, երազանքներն ու մտորումները: «Կյանքի այս խռովայույզ կտորիկը իրականանալու համար գլխավոր մղիչը հանդիսացաւ Գոհարիկին անունս արտասանելը: Անոր շրթունքները բացուեցան վարդի մը պէս ու նուագային առոգանութեամբ մը հնչեցուցին անունս իր բերնին մէջ: Անհանգստութիւն մը եկաւ, նստաւ սրտիս մէջ ու սկսաւ անընդհատ կրծել զայն: Ինքնակորոյս՝ պահ մը, որ բովանդակ էութիւնս տարրալուծուեցաւ...» (*Զ. Որբունի, Պատմուածքներ, էջ 16*):

Ինչպես երեկոն է դանդաղորեն, վայրկյան առ վայրկյան ստվերում ցերեկվա լույսը, այնպես էլ Գոհարիկի անունն արտաբերելն է բացում գրողի հոգու դռները: Նրա հետ է կապված ամեն լավ բան: ➥ *էջ 6*

«առել էին մեր տղաների զենքերը եւ կռվել թշնամու դեմ: Եվ այդ զենքերով էլ հասան Վան» (*նույն տեղում, էջ 96*):

Զինատար խմբերի գործունեության ընթացքում ամրապնդվում են հայ քաղաքական ուժերի միջեւ եղած համագործակցությունն առհասարակ եւ ռազմական զինակցությունը մասնավորապես: Զինատար աշխատանքներում ապահովելով մեկը մյուսի անվտանգությունը՝ տարբեր քաղաքական ուժերի հովանու ներքո գտնվող հայդուկները ձեւավորում էին մեկ-միասնական բռունցքի փոխակերպվելու հոգեբանությունը: Շուտով՝ 1896 թ., հունիսյան ինքնապաշտպանական մարտերում վերոհիշյալ համագործակցությունը տվեց իր արդյունքները:

1896 թ. գարնան ընթացքում իրավիճակի լարվածությունը հետզհետե սրվում էր Վան-Վասպուրականում: Թուրքական իշխանություններն անում էին ամեն ինչ, որ Վանի հայ ազգաբնակչությունը եւս ենթարկվեր ջարդ ու կոտորածի:

Այդ ծանր, տագնապալից պահին Վանում գործող հայկական երեք քաղաքական ուժերի՝ արմենականների, հնչակյանների եւ դաշնակցականների պատասխանատուները ցուցաբերում են վերին աստիճանի գիտակցված համերաշխություն ու բարոյական բարձր որակներ՝ ապահովելու տեղի հայության անվտանգությունը:

Ականատեսների վկայությամբ՝ արմենականների առաջնորդ Մկրտիչ Ավետիսյանը, հնչակյան պատասխանատու Մարտիկը (Մարտիրոս Սարուխանյան) եւ դաշնակցականների պարագլուխ Պետոն (Ալեքսանդր Պետրոսյան) «գերագոյն ճիգերու կը դիմեն ժողովրդին ինքնապաշտպանութեան համար» (*Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Ե., 2003 թ., էջ 51*):

Նույն հեղինակի վկայությամբ՝ դաշնակցականներն ու հնչակյանները «Կովկասի մէջ կրնային դրամ եւ զէնք ձեռք բերել, բայց կարելին ըրած էին արդէն: Իսկ արմենականներու յոյսը դուրսէն աւելի Երկրին մէջ ապրող ժողովրդին ինքնօգնութեան վրայ էր» (*նույն տեղում*): Զենքի փոխադրության եւ դրանց պատկանելության շուրջ հետաքրքիր է սույն դիտարկումը. «Արմենականներու զէնքերը մեծամասնութեամբ անհատական սեփականութիւն էին, մնացածները՝ խմբական: Դաշնակցականներու զէնքերն ընդհանրապէս կուսակցական սեփականութիւն էին: Թէ՛ այդ զենքերը եւ թէ՛ անոնց տրամադրուած գումարը հայթայթուած էր ընդհանրապէս Կովկասէն, նոյնը պէտք է ըսել նաեւ հնչակեաններու ունեցածի մասին: Իսկ Արմենականներու զէնքերու մէկ մասը հայթայթուած էր Վաէն» (*նույն տեղում, էջ 57*):

1896 թ. հունիսի հենց սկզբին սկսվեց Վանի հերոսական ինքնապաշտպանությունը: Այդ ժամանակ արդեն Վանում էր գտնվում սուլթանական բարձրաստիճան պաշտոնյա՝ Սաաեդդին փաշան, որն ուղարկվել էր «Բարեկարգիչ Յանձնաժողովի Բարձր Քոմիսէրութեան» կողմէ՝ իբր «քննիչ»» (*նույն տեղում, էջ 51*): Իրականում վերջինիս Բ. Դռան կողմից հանձնարարվել էր կազմակերպել Վանի հայության ջարդը: Հունիսի 3-ից Սաաեդդին փաշան գործի դրեց ջարդի պլանավորված սցենարը:

Շարունակելի

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՀԱՅ ԴՐԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՄԱՍՈՒՆԴԱՐԱՆԸ

Սկիզբը՝ թիվ 11–14

Թանգարանի թատերական ցուցասրահում ներկայացված են առաջին հայ դերասաններն ու դերասանախմբերը: Սիրանույշից ցուցադրված են անձնական լուսանկարներ, բեմական զարդեր, սուրճի բաժակը: Պ. Ադամյանից ներկայացված են անձնական լուսանկարներ՝ տարբեր դերերում լուսանկարված, անձնական իրեր, ներկայացումների ազդագրեր, Շեքսպիրի «Համլետ» ողբերգության վերլուծությունը՝ գրքի տեսքով, իր ձեռքով պատրաստված ափսեանկար՝ երեւակայական Լիր արքայի դիմանկարը՝ արված մոմով, մրով եւ ասեղով: Այցելուները կարող են տեսնել նաեւ Ադամյանի կտավները՝ հիմնականում ինքնանկարներ եւ շեքսպիրյան թեմաներով աշխատանքներ: Թատերական ցուցադրությունը ներառում է նաեւ 20-րդ դարի հայ դերասան-դերասանուհիների բեմական զգեստները, 20-րդ դարի՝ 1900-ական թթ. հայկական թատրոնների ներկայացումների բեմադրությունների մակետները: Թիֆլիսի հայ դրամատիկական թատրոնի ֆոնդից ցուցասրահում տեղ են գտել դերասանուհի Հասմիկի անձնական եւ բեմական իրերից, դերասանուհի Մարի Բերոյանի բեմական զարդերից, նաեւ՝ թատրոնի ներկայացումների ազդագրեր: Երեւանի թատրոններն են ներկայացված՝ առաջին ներկայացումների ազդագրերից պատրաստված կոլաժների միջոցով: Ներկայացված են Պատանի հանդիսատեսի, Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական, Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական եւ Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնները: Սուրեն Քոչարյանը ներկայացված է լուսանկարների շարքի միջոցով, իսկ գրականության սրահում հեռախոսի միջոցով կարելի է լսել նրա կատարմամբ Թումանյանի «Մարոն» ստեղծագործությունը: Լենինականի պետական թատրոնի արխիվից ցուցադրված են լուսանկարներ՝ դրվագներ ներկայացումներից, դերասանների բեմական եւ անձնական իրերից, ներկայացումների ազդագրեր: Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնին նվիրված ցուցափեղկում զետեղված են թատրոնի մեծ դերասաններից երեքի՝ Վահրամ Փափազյանի, Արուս Ոսկանյանի, Մետաքսյա Սիմոնյանի անձնական արխիվներից իրեր, ներկայացված են լուսանկարներ, ներկայացումներից դրվագներ՝ լուսանկարների տեսքով. ցուցադրված են հանճարեղ Փափազյան-Օթելլոյի կրած զգեստը, հանճարեղ Փափազյան-Համլետի գործածած դաշույնը, Ա. Ոսկանյանի արխիվից՝ դերասանուհու նկարակալով լուսանկարը, Չարենցի՝ Ա. Ոսկանյանին նվիրված «Գովք Արուսին» ստեղծագործության ինքնագիրը, բեմական զարդեր, Մ. Սիմոնյանի արխիվից՝ հովհար, գրիմատուփ՝ գրիմի պարագաներով: Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնին նվիրված ցուցափեղկի հարեւանությամբ կարելի է լսել Համլետի մենախոսությունը՝ Վ. Փափազյանի կատարմամբ:

Կինոյի ցուցասրահում ներկայացված է հայ կինոյի պատմության սկիզբը: Ցուցադրված են Հ. Բեկնազարյանի անձնական իրերը, իր ձեռքով պատրատված գրենական պիտույքներ, նաեւ՝ հայ կինոյի առաջին տնօրեն Դ. Դզնունու ժամացույցը, Հայաստանում առաջին կինոխցիկը: Ս. Փարաջանովից ցուցադրության մեջ ներառված են անձնական փաստաթղթերից եւ «Նռան գույնը» ֆիլմի էսքիզը: Այցելուները կարող են տեսնել նաեւ Ա. Փելեշյանի հեղինական «Իմ կինոն» գիրքը, Լ. Եգիբարյանի զգեստը, որ կրել է «Ճանապարհ դեպի կրկես» ֆիլմում եւ այլ ցուցանմուշներ: Ցուցադրության մաս է կազմում «Նամուս» անունով ծխախոտատուփը, որն արտադրել է Մոսկվայի «Դուկատ» ծխախոտի ֆաբրիկան՝ «Նամուս» ֆիլմի պատվին:

Թանգարանի երաժշտության ցուցասրահում ներկայացված են 8-րդ դարասկզբին ստեղծված հայկական նոտագրության խազային համակարգով խազագրված հոգեւոր երաժշտության նմուշներ, հայ առաջին պրոֆեսիոնալ կոմպոզիտոր Տ. Չուխաճյանի, Մ. Եկմալյանի, Ք. Կարա-Մուրզայի, Ա. Տիգրանյանի, Ա. Սպենդիարյանի, Ռ. Մելիքյանի, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի անձնական իրերից: Անկյուն է հատկացված նաեւ 20-րդ դարի մեր երաժշտագետներին, նույն ցուցափեղկում ցուցադրված է ֆոնոգրաֆ: Կոմիտասին նվիրված հատվածում տեղ են գտել նրա անձնական ֆիսհարմոնը, Կոմիտասի՝ Եղիշե Թադեւոսյանի հեղինական դիմանկարը՝ նվիրված Ռոմանոս Մելիքյանին: Ցուցափեղկում ներկայացված են Կոմիտասի անձնական իրերից, լուսանկարներից, Կոմիտասի 3 գրակնիքները՝ իր անվանատառերով, Կոմիտասին նվիրված հուշանվերը՝ փոքրիկ ոտնամանները, Կոմիտասի նոտաների ինքնագիր տետրը: Ցուցադրված է նաեւ Կոմիտասի շուրջառը, որով նա մասնակցել է պատարագներին, ինչպես նաեւ նրա անձնական սրինգները, բլուլը եւ ռոյալի ծածկոցը: Կարելի է ունկնդրել նաեւ Կոմիտասի կատարումը՝ «Մոկաց Միրզա» երգը: Ցուցասրահում փակցված են օպերային ոճի երգիչ-երգչուհիների համերգների լուսանկարներ, ազդագրեր: Ներկայացված են նաեւ սփյուռքահայ երաժիշտները: Երաժշտական ցուցադրության մեջ են մտնում նաեւ հայկական ժողովրդական երգչախմբերի, նվագախմբերի, երգի, պարի անսամբլների լուսանկարները: Ցուցադրված է կոնսերվատորիայի առաջին շենքի լուսանկարը: Ցուցանմուշների շարքում է Ազնավուրի առաջին բեմական շապիկը, որով նա 8–11 տարեկանում ելույթ է ունեցել հոր սրճարանում: Առանձին ցուցադրված է երաժշտական գործիքների՝ ազգային նվագարանների հավաքածու՝ Սաշա Օգանեզաշվիլու անձնական հավաքածուն, որի մեջ մտնում են Ջիվանու ջութակը եւ Շերամի թառը: Երաժշտության ցուցասրահում Վասիլի Կորգանովի հավաքածուից առկա են Նապոլեոն Բոնապարտի հրաժարականը, Մոցարտի նամակը, Լյուդովիկոս 14-րդ թագավորի նամակը՝ ուղղված Պետրոս Մեծին: Երաժշտության ցուցասրահի մասն է կազմում տեսադարանը՝ երաժշտական կրպակ, որի միջոցով այցելուները կարող են ծանոթանալ գործիքների պատմությանը, նաեւ կարճ հոլովակների միջոցով լսել կատարումներ:

Այս ամենից զատ՝ բոլոր 5 ցուցասրահները հագեցված են ներկայացված գործիչներին պատկերող կամ նրանց ստեղծագործությունը հանդիսացող կերպարվեստի արժեքավոր գործերով՝ կտավներով, մատիտանկարներով, ծաղրանկարներով, քանդակներով. թվենք մի քանիսը՝ Ֆոն Մայդելի հեղինական՝ Աբովյանի միակ դիմանկարը, Բաշինջաղյանի «Խաչատուր Աբովյանի տունը Քանաքեռում» բնանկարը, Սարյանի «Եղիշե Չարենցի դիմանկարը»: ➥ *էջ 7*

Զարեհ Որբունու պատմվածքները

➥ *էջ 5*

Պարասրահում հայտնված գրողն ալկոհոլի ազդեցության տակ իր մտորումներն է անում կյանքի մասին, բայց հանկարծ հայտնվում է Գոհարիկը եւ արտաբերում գրողի անունը: Նա ամեն ինչ մոռանում է՝ նմանվելով հողի տակ հայտնված որդին, որը ծառի ու ծաղկի արմատներ է փնտրում: «Գո-հա-րիկ». ընդամենը երեք վանկ էր, բայց բավական էր կյանքի այդ տաղտուկից դուրս գալու, կյանքը հեղաշրջելու համար: Կարճ զրույցից հետո հերոսուհին անհետանում է, իսկ Որբունին փնտրում է նրան եւ չգտնելով՝ հուսալքվում:

Կյանքի իրողությունները, հանգամանքները մարդկանց տառապանքների աղբյուր են դառնում, փոխում են նրանց կենսակերպը: Որոշ մարդիկ իջնում են կյանքի հատակը՝ նմանվելով, ինչպես Որբունին է բնորոշում, որդերին, բայց նրանց կյանքում հայտնվում են գոհարիկներ, որոնց շնորհիվ առաջանում են ազնիվ զգացմունքներ: Հաճախ այդ մաքրամաքուր զգացմունքներն էլ օգնում են մարդկանց վեր խոյանալ կյանքի հատակից, փոխել իրենց առօրյան եւ ապրել կյանքի բնականոն ընթացքով:

«Նամակը» պատմվածքում հերոսին տառապագին ապրումների մեջ է գցում սիրելիի ուղարկած նամակը: Գոհարիկն ամուսնացել էր տարեց մարդու հետ: Ամեն անգամ նրան տեսնելիս տառապում էր գրողը. իր սիրելին ուրիշի գրկում էր: «Գոհարիկը չկար: Չկար: Անոր շուքն կեանքն իր մէջ ծրարած, կը գլորէր աջ ու ձախ: Բայց Քառթէ Լաթէնը հոն էր միշտ, իր տեղը, պոռնիկի մը պէս՝ որ իր դրան սեմին միշտ քեզ կը սպասէ» (*Զ. Որբունի, Պատմուածքներ, էջ 23*):

Կյանքն անարդար է: Սիրող մարդկանց ճակատագիրը միացնելու փոխարեն բաժանում է: Լույսի պես գեղեցիկ ու մաքուր կինը տարեց մարդու հետ էր ամուսնացել: Այդպիսի կանայք իրականության մեջ քիչ են, մինչդեռ անբարոները եւ անպարկեշտները՝ շատ:

Մի օր գրողը հանկարծակի տեսնում է Գոհարիկին իր տարեց ամուսնու հետ, դրանից հետո նամակ է ստանում նրանից: Գոհարիկը նամակատարին արգելել էր հայտնել իր հասցեն: Որբունուն գրում էր կարոտի ու ափսոսանքի զգացումով, նա արդեն կատարել էր իր ընտրությունը եւ հետդարձի հնարավորություն չուներ: Կերազեր, որ ծերուկի փոխարեն իր կողքին լիներ գրողը, բայց, ցավոք, այդպես չէ: Պետք է համակերպվել կյանքի անարդար օրենքներին: Երբեք չի ցանկանա, որ նա տանջվի իր համար: «Օ՜հ, Եվրոպան խոշոր հանրատուն մըն է, ուր միայն ամենէն պոռնիկները կը դիմանան: Գիտեմ թէ զգացումներդ կ՚ապտակեմ այս խոսքերով: Բայց, կեցի՛ր, քանի սկսայ, պէտք է երթալ մինչեւ խորը եւ խոստովանիլ թէ ամենէն այպանելին հայ տղուն պոռնկացումն է: Եվ այս է, որ մէզ կկորսնցնէ…» (*նույն տեղում, էջ 26*):

Հայ աղջիկը կարծես հայ տղաների թերությունների մասին է խոսում: Նա մտահոգ է իր ազգի ապագայի մասին, ցանկանում է, որ Որբունին, որին հայ գրող լինելու պատիվն էր տրված, չխաբվի օտար իրականության բարքերին, ամուսնանա եւ ընտանիք կազմի հայ կնոջ հետ, որ զարմը, հայկական արյունն անխառն մնան:

Պետք չէ նաեւ հայ աղջկան մեղադրել, թե իբր օտար աղջիկների նման նվիրվել չգիտի: Հասարակությունը հայ աղջկանից կուսություն ու առաքինություն է պահանջում՝ «տունը չփտելու» եւ հանրային նախատինքից հեռու մնալու համար: Շատ հաճախ դա է պատճառը, որ հայ աղջիկները ճիշտ ընտրություն չեն անում: Այդ ամենը հայ աղջկան տրվում է դժվարությունների գնով, ինչպես Գոհարիկի դեպքում: Վերջինս փորձում է խեղդել իր զգացմունքները՝ չցանկանալով հայ երիտասարդի տառապանքների աղբյուր լինել:

«Հայուհի» ամսագիր պիտի հրատարակվեր, որի էջերում նրանք խնդրելու էին հայուհիներից թոթափել առաքինության այդ լուծը եւ ձեռք բերել եվրոպացի կնոջ վայելչությունը: Կյանքի հանգամանքներն ու օրենքներն էին մեղավոր, որ սիրահարները հեռանում էին միմյանցից եւ կտրում իրենց սիրո թելերը: Այդ սերը դառնում էր նրանց երազանքների ու ոգեշնչանքի, բայց միեւնույն ժամանակ տառապագին զգացումների աղբյուրը:

Որբունու պատմվածքների հերոսը տառապող մարդն է, որը հաճախ լուռ ու անտրտունջ գնում է կյանքի հոսանքով, տանջվում է, քանի որ չի կարողանում ոչինչ փոխել: Գրողի պատմվածքներում հերոսները կերպավորված են գլխավորապես իրենց ներքին

ապրումների ընթացքի պատկերմամբ, շատ հաճախ ինքնազննումի, ինքնավերլուծության եղանակով:

Երկար ընդմիջումից հետո՝ 1939 թ., Փարիզում Որբունին հրատարակում է «Վարձու սենյակ» վերնագրով պատմվածքների ժողովածուն, որը ներառում էր 1925–1937 թթ. գրված տարբեր պատմվածքներ: Պատմվածքներում հեղինակի ստեղծագործական ընդունակությունները դրսեւորվում էին մեկ այլ կարեւոր կողմով: Որբունին կարողանում է իր ասելիքն ամփոփել ծավալով փոքր գործերում՝ սեղմ եւ հակիրճ տողերով երկխոսության մեջ մտնելով ընթերցողի հետ:

Պատմվածքներում հասարակական կյանքը պայմանավորող հարաբերություններն ունեն սոցիալ-տնտեսական բնույթ: Հերոսների գործողությունները պատճառաբանված են հենց այդ կտրվածքով: Ժողովածուի առաջին՝ «Վարձու սենյակ» պատմվածքի հերոս Տիգրանը կյանքի դժվարին ճանապարհ անցած, եվրոպական մեծ քաղաքում ապաստան գտած հայ է: Անծանոթ քաղաքում ամեն օր ապրում էր հարազատ մի մարդու որոնման զգացողությամբ՝ փողոցով անցնող ամեն անցորդի մեջ փնտրելով հարազատ էակի: Անհրաժեշտ էր հույս, հավատ, որ վաղվա ապրուստի հոգսից կքած՝ չծուլանար, չհաղթվեր: Տիգրանն իրեն սփոփում էր այն սին հույսով, որ այդ քաղաքը, չնայած հրեշային կերպարանքին, ազատության երկիր է, իսկ աշխատանքը՝ սուրբ: Նա չի համաձայնում անծանոթ մարդու համոզմանը, որ մարդիկ են անսուրբ: Տիգրանը համամիտ չէր այս մտքին: Կյանքի նկատմամբ զարգացած անօրինակ վախը վերածել էր նրան հնազանդ կենդանու: Ժպիտն էլ անհամարձակ էր ու ներողամիտ:

Տիգրանի բախտակիցներից էր «Գործազուրկ մը» պատմվածքի հերոս Աշոտ Նշանյանը: Նա էլ Տիգրանի նման ամբողջացնում է 20–30-ական թվականների սփյուռքահայ այն սերնդի դեգերումները, որը, ապրած լինելով Մեծ եղեռնի սարսափը, դժվարանում էր կողմնորոշվել անհարազատ միջավայրում: Եվրոպացին երբեք չի կարող հասկանալ հայի արմատախիլ եղած հոգին: «Երբեք, երբեք պիտի չհասկանան անոնք մեր հայու արմատախիլ ոգին: Ինչպե՞ս բացատրել զայն: Ինչպե՞ս ըմբռնել ծառը առանց հողի ու մեր հոգին, որ տրտնջող խշրտոցն է հովերուն նետված չոր տերեւին, որ կցավի ու կիծծի ամեն անգամ, երբ հովերը կփոխեն իրենց ուղղությունը» (*Զ. Որբունի, Վարձու սենեակ, Փարիզ, 1939, էջ 18*): Սա կարծես հայրենազուրկ ամբողջ ժողովրդի տառապանքի ձայնն է՝ բարձր, հզոր, հուժկու եւ միաժամանակ անհասկանալի օտարներին:

Շարունակելի

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ

➥ էջ 4

Գրիգոր Տաթեւացին կատարելագործել է համալսարանի ծրագիրը, կազմել դասագրքեր («Գիրք հարցմանց», «Գիրք քարոզութեան...», «Ոսկեփորիկ»), որոնք եղել են նաեւ քարոզության արվեստի, աստվածաբանության եւ Հայոց Եկեղեցու ճշմարիտ դավանության լավագույն ձեռնարկներ: Գրիգոր Տաթեւացու գործունեությունը նպաստել է գրչության արվեստի զարգացմանը: Նա վարել է գրչության տեսական դասընթաց եւ անցկացրել գործնական պարապմունքներ: Պատրաստել է մոտ 60 մատենագիր (գրիչ): Գրիգոր Տաթեւացու մահից հետո (1409 թ.) համալսարանի նախկին հռչակը խամրել է: 1435 թ.՝ Շահռուխի արշավանքի ընթացքում, Տաթեւի վանքն ավերվել է, իսկ միաբաններն ապաստանել են Գուգարքում (Սանահինի վանքում):

Տաթեւի վանքին կից X դ. գործել է Տաթեւի մատենադարանը, որը համալսարանի գոյության տարիներին հարստացել է եւ գոյատեւել մինչեւ 1911–1912 թթ., իսկ ավերից ու ավարառություններից փրկված 140 ձեռագիր մատյանները տեղափոխվել են Էջմիածին, ապա՝ Երեւան՝ Մատենադարան (Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ):

Տաթեւի համալսարանին կից գործել է մանրանկարչության դպրոց: Մեզ են հասել սակավաթիվ, բայց արվեստի բարձրարժեք գործեր:

XIII–XIV դդ. Տաթեւի վանքի եպիսկոպոսությունն ուներ 677 հարկատու գյուղ՝ իր թեմում գտնվող 14 գավառում (Ծղուկ, Եվայլախ, Վայոց ձոր, Գեղարքունիք, Սոթք, Աղահեճք, Հաբանդ, Բաղք, Քաշունիք, Կովսական, Արեւիք, Ձորք, Երնջակ, Ճահուկ), բազմաթիվ վանքեր: XIV դ. Հովհան Որոտնեցին Տաթեւի վանքի գավթի վրա կառուցել է կամարակապ երկհարկանի զանգակատուն: 1381–1387 թթ.՝ Լենկ Թեմուրի՝ Սյունիք կատարած արշավանքի ժամանակ, վանքը կողոպտվել է, հրկիզվել, կորցրել կալվածքների մեծ մասը: Տաթեւի վանքը վերստին բարգավաճել է XVII–XVIII դդ.: Առաքել եպիսկոպոսը կառուցել է վանքի հարավային կողմի գավիթը, Գրիգոր Տաթեւացու հիշատակին խաչքար կանգնեցրել: Սիմեոն Անգեղակոթցին Պարսից շահից հետ է ստացել Տաթեւի վանքից խլված կալվածքները: Հովհաննես Շինաթաղցին բազմիցս մեկնել է Սպահան՝ Պարսից Հուսեին շահի մոտ եւ վերահաստատել Տաթեւի վանքի իրավունքները կալվածքների նկատմամբ, կառուցել արեւելյան դահլիճը, սրբատաշ քարից սենյակներ: Ներսես եպիսկոպոսը բարեկարգել է վանքը, 1646 թ. կառուցել արեւմտյան խցերը եւ Տաթեւ գյուղի Ս. Ներսես եկեղեցին: Զաքարիա եպիսկոպոսը կառուցել է առաջնորդարանի շենքը, իսկ 1671 թ.՝ բնակելի սենյակներ: Կիրակոս եպիսկոպոս Աղվերձեցին նորոգել է Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու գմբեթը եւ վանքի պարիսպը: 1705 թ. Խոջա Անտոնի միջոցներով տեր Միքայելը նորոգել է տաճարը: XVIII դ. Հովհաննես Ղալամյանցը նորոգել է վանքի շենքերը, եկեղեցիների տանիքները, կառուցել տնտեսական շինություններ, իսկ 1745 թ.՝ Տաթեւ գյուղի աղբյուրը: Մինաս Շինաթաղցին նորոգել է վանքի պարիսպը, կառուցել սեղանատուն, խոհանոց, հացատուն: Աբրահամ Աստապատեցին XVIII դ. երկրորդ քառորդին Տաթեւի վանքում դպրոց է բացել (գործել է մինչեւ XX դարը), համալիրի հյուսիսարեւելյան կողմում կառուցել 16 դասասենյակով դպրոցի շենք, որն արժեքավոր է որպես Հայաստանի ուշ միջնադարի կրթական կառույցի՝ մեզ հասած միակ օրինակ: Հովակիմ արքեպիսկոպոսը 1787 թ. եկեղեցու հարավային մուտքի առջեւ կառուցել է Գրիգոր Տաթեւացու մատուռ-դամբարանը, հյուսիսային պարսպի բուրգերը, բնակելի սենյակներ, ձիթհանքի շենք եւ այլն: 1796 թ. եւ 1826 թ. վանքն ասպատակել են պարսից զորքերը եւ կողոպտել:

Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո (1828 թ.), Տաթեւի վանքի վանահայր Մարտիրոս եպիսկոպոսը ռուսական իշխանությունների միջոցով վերադարձրել է վանքից խլված կալվածքները, հիմնովին նորոգել Տաթեւի վանքի համալիրը, Տաթեւ գյուղի ճանապարհը, Կաքավասարից ջրագիծ անցկացրել, տնտեսական նոր շենքեր կառուցել:

1837 թ. Տաթեւի վանքի մետրոպոլիտությունը վերացվել է, եւ Սյունիքը կազմել է Երեւանի թեմի մի մասը: 1858 թ. Տաթեւի վանքն ունեցել է 70 հարկատու գյուղ, 1898 թ.՝ 15 գյուղ եւ 5 միաբան: 1862 թ. Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու արեւելյան կողմը նորոգել է Հովհաննես արք. Ասլանյանը, 1865 թ. վանքի հյուսիսային կողմի շենքերը՝ վանահայր Սարգիս Գասպարյանցը: XIX դ. վերջին քանդել են վանքի գավիթն ու զանգակատունը եւ XX դ. սկզբին, տաճարի արեւմտյան ճակատին կից, կառուցել բարձր, եռահարկ, շքեղ, քանդակազարդ զանգակատուն: 1931 թ. ապրիլի 27-ին Տաթեւի վանքը երկրաշարժից ավերվել է, քանդվել են Ս. Գրիգոր Լուսավորիչ եւ Ս. Աստվածածին եկեղեցիները, Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու գմբեթը, զանգակատունը, սյունասրահը: 1974–1998 թթ. վերակառուցվել են եկեղեցիները, տաճարի գմբեթը, նորոգվել բնակելի եւ տնտեսական շենքերը, պարիսպը, զանգակատան առաջին հարկը:

Շարունակելի

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՀԱՅ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՄԱՍՈՒՆԴԱՐԱՆԸ

➥ էջ 6

Սրահների գունային ձեւավորումը եւս ինքնանպատակ չէ. գրականության 2 սրահներում իշխում է թանաքագույնը, թատրոնի եւ երաժշտարվեստի սրահներում՝ կարմրաշագանակագույնը՝ թատրոններում եւ համերգասրահներում առավել ընդունված գույները:

Չարենցի անվանակիր թանգարանի հատվածներից է «Միջին Արեւելքի արվեստ» ցուցադրությունը, որ ներառում է

սփյուռքահայ նկարիչ, հողարվեստի ուղղության հիմնադիր Մարկոս Գրիգորյանի հավաքածուն. ընդգրկում է մոտ 2 500 բնօրինակ ցուցանմուշ: Հավաքածուն Մ. Գրիգորյանը նվիրաբերել է Հայաստանին 1993 թ.: Ցուցադրությունն ընդգրկում է Ք. ա. 4-րդ հազարամյակից մինչեւ մեր ժամանակների իրանական, հայկական, եվրոպական, ամերիկյան հոգեւոր եւ նյութական մշակույթի արժեքներ, այդ թվում՝ Էլամի խեցեղեն, վաղ բրոնզի դարի խեցեղեն, Վանի թագավորության բրոնզ, հայ գորգարվեստ, իսլամական միջնադարյան արվեստ, մանրանկարչություն, գեղագրություն, ղաջարական կերպարվեստ, զարդարվեստ, տարազ, Մ. Գրիգորյանի հեղինակային ստեղծագործությունները՝ հողանկարներ, գեղանկարներ, գորգեր: Գրիգորյանն ունի նաեւ հարուստ գրադարան, որը եւս պահվում է ԳԱԹ-ում:

Հավելենք, որ մեկ դարը բոլորած թանգարանի ֆոնդերում առկա գանձերի փոքր մասն է մշտական ցուցադրությամբ ներկայացված:

Մշտական ցուցադրության մի յուրօրինակ հավելում կարելի է համարել թանգարանի տարածքում 2007 թ. բացված հայ դաշնաահար, կոմպոզիտոր Ստեֆան Էլմասի հուշասենյակը: Այն ներառում է մոտ 100 միավոր թանգարանային նմուշ, որոնցից են Էլմասի տպագիր երկերը, լրագրային կտրոններ, համերգային ծրագրեր, 2 շատ արժեքավոր ցուցանմուշ՝ Էլմասի մատիտանկարը (հեղինակ՝ Է. Ռապեն) եւ կիսանդրին (հեղինակ՝ Ջ. Գրոսս). ի դեպ, Ռապենը ձեռքեր չի ունեցել, նկարել է ոտքերով: Այստեղ է նաեւ Էլմասի ռոյալը՝ պատրաստված իր պատվերով: Հայ մեծ կոմպոզիտորին վերաբերող մի շարք արժեքավոր նյութեր է թանգարանին ընծայել Շվեյցարիայում գործող «Ստեֆան Էլմաս» հիմնադրամը, որի օժանդակությամբ էլ ստեղծվել է այս գողտրիկ անկյունը: Էլմասի հուշասենյակի բացմանն ի սկզբանե իր նպաստն է բերել նաեւ ֆրանսահայ երաժիշտ Ալեքսանդր Սիրանոսյանը:



Փարիզահայ Անահիտ Գրիգորյանի աջակցությամբ 2008 թ. վերանորոգվել է թանգարանի դահլիճը՝ վերափոխվելով կոմիտասյան սրահի: Այսօր այն, նիստերի ու համերգների դահլիճ լինելուց զատ, հայ երգի Մեսրոպ Մաշտոցին նվիրված մի տպավորիչ ցուցադրություն է:

Անշուշտ, լինում են նաեւ ժամանակավոր ցուցադրություններ. թանգարանը տարբեր առիթներով ու թեմաներով ժամանակավոր ցուցադրություններ է կազմակերպել ինչպես իր սրահներում, այնպես էլ հանրապետության այլ քաղաքների ու արտերկրի զանազան հաստատություններում: Նշանակալից էր հատկապես, այսօր արդեն ցավ ի սիրտ, բայց ոչ անհույս պիտի հիշենք, Շուշիի ազատագրման մեկամյակի առթիվ 1993 թ. կազմակերպված «Շուշի. մշակութային կյանքի մեկ դարը (1820–1920) ցուցահանդեսը, որով թանգարանն իր ջերմ մասնակցությունը բերեց Արցախյան շարժմանը: Ցուցահանդեսը միառժամանակ ներկայացվեց նաեւ մեր մեկ այլ մշակութային քաղաքում՝ Գյումրիում, ապա հանգրվանեց Շուշիում: Թանգարանը 2 անգամ առցանց թարմացրել է այդ ցուցադրությունը, քանզի սկսեցին վիճարկել Շուշիի հայկական լինել-չլինելու հարցը:

Արժե հիշել նաեւ 2000 թ. Կ. Պոլսո Հայոց պատրիարքարանի աջակցությամբ կազմակերպված «Հայ Պոլիս» ցուցահանդեսը, որը լայնորեն ներկայացրեց Պոլսո հայ գրական, կրթական ու մշակութային կյանքի համապատկերը: Ի դեպ, պոլսահայ կոմպոզիտոր Սիրվարդ Գարամանուկի երաժշտության հիման վրա թանգարանի անվամբ եւ խորհրդատվությամբ նկարահանվել է «Ախթամար» կինոնկարը՝ ըստ Թումանյանի համանուն ստեղծագործության:

Հոբելյար հաստատությունը սերտացնում է միջազգային կապերը ոչ միայն իր հոգեւոր գանձարանը համալրելու, այլեւ այն առավել լայնորեն հանրահռչակելու նպատակով՝ հատկապես ցուցահանդեսների միջոցով: Վերջին տարիներին թանգարանի որոշ նյութեր տեղ են գտել Նորվեգիայում, Ֆրանսիայում եւ տարբեր երկրներում կազմակերպված ցուցահանդեսներում:

Ցուցահանդեսները սովորաբար զուգակցվում են տարբեր տարեդարձներին ու մշակութային իրողություններին նվիրված գիտական ու գեղարվեստական միջոցառումներին: Թե՛ ցուցադրական եւ թե՛ զանգվածային աշխատանքները նախաձեռնում է թանգարանի գիտացուցադրական բաժինը, իսկ այդ ձեռնարկումներին մասնակցում է թանգարանի ողջ աշխատակազմը՝ ներգրավելով հանրապետության գիտագեղարվեստական ներուժը:

Առհասարակ թանգարանը սոսկ արժեքավոր առարկաներ հավաքող, ուսումնասիրող, պահպանող ու ցուցադրող հաստատություն չէ, այլ նաեւ կազմակերպական, կրթադաստիարակչական լիարյուն կյանքով ապրող մարմին՝ մշտապես նախաձեռնող, որոնող, պրպտող, արարող, մարդկանց հոգիներում գեղեցիկի սերմեր ցանող: Հարյուրամյա հաստատության կյանքի անբաժանելի մասն են տարաբնույթ միջոցառումները: Թանգարանն անտարբեր չի եղել ոչ մի կարեւոր հոբելյանի նկատմամբ, իր կազմակերպած գիտական նստաշրջաններով, համերգներով, դասախոսություններով, գրքերի շնորհանդեսներով եւ բազմաբնույթ այլ նախաձեռնումներով մասնակցել է երկրի գիտական ու մշակութային կյանքին:

Հոբելյար թանգարանը ցուցադրական ու զանգվածային աշխատանքներ է ծավալում նաեւ հանրապետության մարզերում՝ տեղի թանգարանների հետ համագործակցաբար, եւ հատկապես՝ իր մասնաճյուղերի միջոցով: Վերջին տարիներին թանգարանն իր յուրահատուկ միջոցառումներով մասնակցում է նաեւ Ֆրանսիայի թանգարանների նախաձեռնած «Թանգարանային գիշեր» ակցիային, Եվրոպական ժառանգության օրերին, ինչպես նաեւ ամենատարբեր միջազգային նախաձեռնությունների: Մշակութային օջախը միջոցառումների պակաս չի ունեցել նույնիսկ չարաբաստիկ 2020-ին. երկրագունդը ճիրաններում պահած թագավարակի ամիսներին անգամ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ Մհեր Մկրտչյանի 90-ամյակին նվիրված ցուցադրության բացում եւ արխիվի հանձնում, ամանորյա բարեգործական միջոցառում՝ Արցախում զոհված կամ վիրավոր զինծառայողների ընտանիքների երեխաների համար, «Խրիմյան Հայրիկ – 200» ժամանակավոր ցուցադրություն՝ առցանց եւ կենդանի, Գուրգեն Էդիլյանի «Խաչատուր Աբովյանի կյանքն ու գործունեությունը» գրքի շնորհանդես, Ռուզան Արիստակեսյանի «Գրական վավերագրեր (1920–1930-ական թվականներ)» քառահատորյակի առաջին գրքի շնորհանդես, «Երգարան» առցանց հաղորդաշար, «Մեր թաղի մարդիկ» առցանց ներկայացում, «Ղեւոնդ Ալիշան – 200» առցանց ցուցադրություն, «Սպիրիդոն Մելիքյան – 140» առցանց ցուցադրություն, «Հեքիաթի աչքերով» առցանց հաղորդաշար, «Թանգարանների գիշեր – 2020» ակցիա՝ առցանց, «Մեծ հայրենականի Մեծ հայերը» առցանց շարք եւ այլն: Այս՝ 2021 թ. սկսվելուն պես թանգարանը վերսկսեց միջոցառումների շարքը. անդրանիկ ձեռնարկը հունվարին Հայկազ Խաչատրյանի կտավների ցուցահանդեսն էր, որին, իհարկե, հաջորդել եւ հաջորդում են այլ ձեռնարկներ:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու

ՀԱՅՐԵՆԻՔ–ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ՝ ԸՍՏ ՀՐ. ԹԱՄՐԱԶՅԱՆԻ



Խոսելով հայ գրականության նորագույն պատմությունից՝ նախ անդրադառնանք Հովհաննես Թումանյանի ապրած ժամանակաշրջանին, բանաստեղծի կյանքին եւ թողած գրական ժառանգությանը:

Նա չի մեծացել ապարանքներում, դայակների գրկի մեջ, դաստիարակների հսկողության տակ, բազմալեզու գրքերի աշխարհում: Ծնվել է մեկ դար առաջ՝ հայկական հինավուրց գյուղերից մեկում՝ Դսեղում, հասարակ գյուղացու ընտանիքում: Լուսնյակ գիշերներին, նահապետական անշուք ու մրոտ խրճիթի առաջ, գերաններին նստած, երեխաները վառվել են հազարամյակներից եկած հեքիաթներով, նրանց հոգին թեւածել է չարի ու բարու կախարդական աշխարհներում:

Այսպես է անցել Հովհ. Թումանյանի մանկությունը: Եվ, սակայն, նրա ապրելակերպն ամենեւին էլ բացառություն չի եղել հայ մշակույթի մեծերի շարքում: Դժվարին էր մտավորականության վիճակը մի ժողովրդի, որը դարերի մեջ կորցրել էր պետականությունն ու քաղաքական ղեկը:

Ինքը՝ Թումանյանը, սիրում էր շեշտել, որ ժողովրդի քանակը վճռական նշանակություն չունի արվեստի եւ գրականության ստեղծման ասպարեզում. պատմության փորձը ցույց է տալիս, որ գիտակցության եկած փոքր ժողովուրդները կարող են տալ մեծ գեղարվեստագետներ եւ գրողներ:

Գրողի մեծությունը ցույց տալու համար, ինչպես արդարացիորեն նշել է հայ մեծանուն գրականագետ Հր. Թամրազյանը, պետք է որոշել այն հարաբերությունը, որի մեջ նա մտել է իր նախորդների եւ հետնորդների հետ, տեսնել այն տեղը, որ նա գրավում է գրական ընդհանուր շղթայի մեջ, այսինքն՝ գտնել այն էականը, ինչ ավելացրել է նախորդների վաստակին եւ թողել հետնորդներին: Բայց այս հարցի բուն էությունը կապված է մի ուրիշ խնդրի հետ. ինչ հարաբերությունների մեջ է նա գտնվում հայրենական կյանքի հետ՝ արվեստի տեսանկյունից, քանի որ ամեն մի ազգային գրականության բուն էությունն ազգային կյանքն է, կենտրոնական հերոսը՝ հայրենիքը՝ իր բազմաբովանդակ դրսեւորումներով:

Իսկապես, ի՞նչ էին ստեղծել Թումանյանի անմիջական նախորդները՝ 19-րդ դարի արեւմտահայ եւ արեւելահայ բանաստեղծները: Սկիզբ առնելով գաղութներում՝ Պոլսում, Արեւելքի եւ Ռուսաստանի քաղաքներում, հայ բանաստեղծներն առաջ քաշեցին հայրենիքի խնդիրները՝ բերելով նոր մտքեր, տրամադրություններ ու քաղաքական կրքեր: Կարոտախտ եւ պայքարի ոգի՝ հայրենիքի քաղաքական ազատագրության համար, ահա Ալիշանի եւ Պեշիկթաշլյանի, Պատկանյանի եւ Նալբանդյանի, Շահազիզի եւ այլոց տրամադրությունների թթխմորը: Նրանք կատարեցին մեծ գործ՝ ազգն արթնացնելով դարավոր հինջից եւ փշրելով ընդարմացած մտքի կապանքները: Իրենց ստեղծագործություններով նրանք նպաստեցին ժողովրդական ոգու արթնացմանը՝ կենարար հոսանք հաղորդելով հայ գրին եւ գեղարվեստական ողջ մտածողությանը: Այդ գործն ուներ մեծ բովանդակություն. դա եվրոպական քաղաքակրթության եւ ազատագրական իդեալների հաստատումն էր հայ իրականության մեջ:

Ընդունելով այս ժառանգությունը՝ Թումանյանը, հոգեպես շատ թելերով կապված լինելով նախորդների հետ, միաժամանակ պետք է առաջ նայեր: Նա երիտասարդ հասակում, բերելով հարգանքի եւ սիրո անխուսափելի տուրքն իր նախորդներին, սկսում է նոր կողմերից նայել ազգային կյանքին եւ արվեստի բովանդակությանը: Բնականաբար, հետեւելով մյուս ժողովուրդների գրականության փորձին եւ մեր կյանքի ու գրականության զարգացման ներքին տրամաբանությանը, նա առաջադրում է հայրենիքի պատկերման եւ հայրենասիրության նորագույն բարձր որակի ստեղծման խնդիրը: Հայրենիքը բազմաթիվ գծերի՝ սոցիալական, քաղաքական, կենցաղային եւ բարոյական, բնական եւ աշխարհագրական, հոգեբանական հատկանիշների օրգանական ամբողջություն է: Ճշմարիտ հայրենասիրությունը պետք է տեսնել այն ստեղծագործությունների մեջ, ուր հայրենիքը պատկերվում է ավելի խոր եւ բազմակողմանի: Նախորդները լուծել էին խնդրի միայն մի կողմը, թերեւս այն պատճառով, որ ժամանակը գերազանցապես առաջ էր մղել հենց այդ կողմը՝ քաղաքականը:

Սակայն արդեն նոր դարաշրջանում ընդգծվել էին բոլոր հատկանիշները. հայրենիքն ապրում էր բարդ կյանքով: Թումանյանը լավ զգաց այդ փոփոխությունը եւ բերեց հայրենիքի երգը՝ ավելի հարուստ երանգներով, ազգային եւ համամարդկային առնչություններով:

Չի կարելի ասել, թե քաղաքականից զատ՝ նախորդ շրջանի բանաստեղծներն ուրիշ երգ չեն երգել: Բայց հանգամանքների պատճառով այդ տրամադրությունները չէին կարող առաջնային դառնալ, քանի որ կյանքում ծնվում էին նոր երեւույթներ, որոնք, սակայն, դեռեւս չէին ընդգծվել ամբողջ ուժով: Արեւելահայ բանաստեղծներից կարելի է հիշել Թումանյանի անմիջական նախորդներին՝ Ղ. Աղայանին, Հովհ. Հովհաննիսյանին, մասամբ՝ Ալ. Ծատուրյանին, որոնք ստեղծում էին բնաշխարհի երգը, մոտենում մարդկային կյանքի կնճռոտ երեւույթներին: Ժողովրդական կյանքն արտացոլող այդ նմուշները, որոշակի գեղեցկություններով հանդերձ, այնուամենայնիվ, որակական թռիչք չէին նշանավորում հայ գեղարվեստական մտածողության մեջ: Նրանք գերազանցապես ինչ-որ արահետներ էին նշում նոր սերնդի բանաստեղծների հետագա ճանապարհի համար:

Թումանյանը ձգտում է լինել իր հայրենիքի նոր կյանքի երգիչը՝ ազգային եւ եվրոպական իմաստով: Եվ նրան հաջողվում է հասնել այս դժվարագույնին: Նշենք, որ Հայաստանը բաժանված էր երկու մասի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր առանձնահատուկ ցավը. մեկը՝ ֆիզիկական ոչնչացման սարսափը, մյուսը՝ սոցիալական-քաղաքական ճնշումը: Այս բոլորը մեծացնում էին ազգի տառապանքը՝ հսկայական նյութ ընձեռելով երկու դարի արանքում ծնված գրողներին՝ ազգային եւ համամարդկային ընդհանրացումների համար:

Ինչպես մեր կյանքը, այնպես էլ գրականությունն ունի զարգացման ուրույն, հակասական, «անբնական» թվացող մի հատկություն: Նոր գրականությունը կարճ միջոցում անհրաժեշտաբար պետք է իր մեջ խտացներ քաղաքակիրթ ժողովուրդների անցած գրական հոսանքների փորձը եւ միաժամանակ կրեր նորագույն գրական մտածողության ազդեցությունը:

Արդեն Չարենցն էր նկատում, որ մեր գրականության մեջ կողք կողքի դեռ կենսունակ են գրական՝ գրեթե անհարիր թվացող հոսանքները: Ավելին. Թումանյանի խոսքով ասած՝ նոր գրականությունը սկսողների մի մասը դեռ ապրում էհենց այդ նոր սերնդի հետ: Որոշ պայմանականությամբ ասենք, որ Պուշկինը եւ Լերմոնտովը, Նեկրասովն ու Բլոկը, Մայակովսկին ու Եսենինը ժամանակակիցներ էին կամ ստեղծում էին գրեթե միաժամանակ: Եվ դա, բնականաբար, չէր կարող իր ազդեցությունը չունենալ հայ գրողների գրական մտածողության վրա՝ բերելով իր հետ նոր որակ:

Ավանդների եւ նոր բովանդակության, նոր, բարդ կյանքի տված բազմերանգ նյութի մարմնավորման միջոցով հայ բանաստեղծությունը դառնում է ոչ թե գրական ձեւերի ու եղանակների մի թանգարան, այլ ազգային որակ, որը տեղ է նվաճում 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի համաշխարհային գրականության պատմության մեջ: Այս արժանիքն ունեին արեւելահայ եւ արեւմտահայ նշանավոր բանաստեղծները՝ Իսահակյանը, Մեծարենցը, Սիամանթոն, Տերյանը, Վարուժանը եւ, իհարկե, ինքը՝ Հովհ. Թումանյանը՝ «Արարատը մեր նոր քերթության»:



Թումանյանի մեծությունը հասկացել են հենց ամենից առաջ Իսահակյանը, Տերյանը, Չարենցը: «Թումանյանի սլացումներից այն կողմ չի սլացել մեր ոգին» (Իսահակյան), «Թումանյանն օլիմպիական մեծություն է, անկրկնելի, ունիկում» (Տերյան), «Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության» (Չարենց): Իրավացի էր Զորյանը՝ ասելով. «Այսպես կարող էր գրել միայն նա, ով հասու է իր աղետներ տեսած ժողովրդի հոգեբանությանը եւ նրա պատմողական ոճին»:

Մի խոսքով՝ Թումանյանի ստեղծագործությունները՝ սկսած էպոսից մինչեւ հեքիաթ, լեգենդից մինչեւ զրույց, հավերժականի հայտնաբերումն է հնի մեջ՝ լուսավորված հանճարի լույսով:

Թումանյանն ստեղծում է մեր հայրենիքի կերպարը գրականության մեջ՝ քաղաքական, սոցիալական, բարոյական, զուտ հայկական եւ համաշխարհային դրամատիկ անցումներով: Նա չունի Սիամանթոյի եւ Չարենցի մտասեւեռումը զուտ քաղաքական թեմայի նկատմամբ, քանի որ ուներ մի շարք այլ մեծ նպատակներ եւ կարեւոր ասելիքներ: Բայց այստեղ էլ նա, այնուամենայնիվ, ուսուցիչ է եւ ժառանգորդ, ժառանգորդ հնի եւ որոշ կողմերով՝ հուն հարթող մի հեղինակ նորագույն սերնդի համար: Նա «ողբի հայրենիքի» պատկերներին օրգանապես գումարում է նոր հայրենիքի ուժը, հույսի եւ լույսի երազը:

Թումանյանը մեր ամենալավատես հեղինակն է, բայց չի կարելի անտեսել այդ լավատես բանաստեղծի ծանր դրաման, հոգու ամպամած պահերը, որոնք գալիս են ժողովրդի բախտից:

Նրան գրավում էր Աբովյանի շիկացած հայրենասիրությունը, որն ուներ խոր բնականություն եւ հենված էր ազգային կյանքի իրական պատկերների վրա: Այն իր հերթին արտահայտում էր «հայի տանջանքն ու տենչանքը»: Եվ Թումանյանը ձգտել է մի նոր եղանակով արտահայտել մարդու եւ ազգերի ճակատագրերը, դասերի ու դասակարգերի հակասությունները: Նրա կերտած դրական հերոսներն ամբողջանում են իրականի եւ իդեալականի, ապրած ցավերի եւ երազների, ներկայի եւ գալիքի պատկերացումներից: Նա սիրում է մարդուն, հայտնաբերում այդ մարդու ներքին հարստությունը՝ տանջանքների եւ տենչանքների աշխարհը, եւ աստվածացնում նրան:

Թումանյանը բազմակողմանի, ամբողջական, իրական եւ իդեալական, ճշմարիտ եւ ընդգծված ստեղծում է նաեւ ժողովրդի հավաքական կերպարն ու հավաքական հոգեբանությունն այն դրամատիկ բախումներով, որոնք խոր ճեղքեր են առաջ բերում նաեւ անհատների հոգեկան աշխարհում:

Այսպիսով՝ Թումանյանի ստեղծագործությունները գեղարվեստի մեջ բերում են մի նոր դարաշրջան, որը թե՛ նյութով, թե՛ կատարմամբ փակում է 19-րդ դարի հայ գրականության նվաճումների գիրքը եւ բացում արվեստի պատմության նորագույն էջ:

ԱՆՈՒՇ ԱՂԱՍԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 18.08.2021 թ.
Տպաքանակը՝ 1225